

## ՀԱՅՈՑ ՍՓՅՈՒՌԸ

Ո՞րն է սփյուռքի հայրեն գոյատևելու իմաստը, մի՞թե ինքնա-  
նպատակ է հայապահպանունը Հայրենիքից դուրս, եւ կամ՝ ի՞նչ է  
սփյուռքի կորուստը հայության համար: Սրանք հարցադրումներ  
են, որոնք պատասխանների կարիք ունեն հատկապես մեր օրե-  
րում, երբ սփյուռքի ձուլման աննախադեպ տենպերը աչքի առաջ  
են, իսկ շատ սփյուռքահայեր իրենց հարց են տալիս, թե ինչու  
պիտի օտար միջավայրում դպրոց, եկեղեցի պահեն, այլազգիների  
հետ չխառնվեն, երբ այդ ամենը այլոց շրջապատում դժվարաց-  
նում է իրենց կյանքը, անձնական բարեկեցության խնդիրը:

Մենք ասում ենք. գաղթաշխարհի հայապահպանունն ունի  
միայն մեկ նպատակ՝ *Հայաստան վերադառնալ որպես հայեր,  
այսինքն՝ հայ մնալ մինչեւ հայրենադարձություն:*

Սփյուռքը հավիտենորեն հայ մնալու միայն մեկ ճանապարհ  
ունի՝ վերադարձ իր նախահայրերի սրբազան հողը. հակառակ  
դեպքում՝ նա դատապարտված է՝ աստիճանական ուժացումի ճա-  
նապարհով, պատմության ասպարեզից հեռանալու: Ահա՛ թե ինչու  
«Ղարձ դեպի Հայրենիք», «Հայահավաք Ցեղի բնօրրանում» կար-  
գախոսները պիտի սահմանվեն իբրեւ սփյուռքահայության գոյու-  
թյան նպատակներ:

Անշուշտ, սփյուռքի կորուստը մեզ համար նաեւ քանակական  
կորուստ է, բայց առավելապես՝ որակական, ասել է թե՛ *էության*  
կորուստ: Սփյուռքահայության կորուստը նույնքան սպառնում է մեր  
էությանը, որքան օտարի կողմից նվաճված Արեւմտահայաստանի  
կորուստը: Եվ հայրենաբնակ հայության կապը սփյուռքահայության  
հետ մեզ համար առաջին հերթին *էակցական կապ է:*

Կորսված հայրենիք տենչալով՝ մենք ոչ թե բաղձում ենք  
տնտեսական կամ այլ կարգի շահավետություն, այլ՝ նախ եւ  
առաջ աղճատված էության ամբողջացում. սփյուռքահայություն  
կորցնելով՝ մենք վերստին կորցնում ենք էություն, այն առավել  
աղճատում:

Եվ այն սփյուռքահայերը, որոնց համար հայ մնալը, հայեցի ապրելը, իրենց սերունդների հայկականորեն դրսևորվելը կյանքի իմաստ են, իհարկե նրանք պետք է ձգտեն եւ կձգտեն Չայրենիք վերադառնալ: Եթե այդ զգացումները չկան, գիտակցական այդ դաշտը ձեւավորված չէ, պարզ է, որ մարդն իր բնօրրան չի վերադառնա: Այդօրինակ մարդկանց հետ հարաբերությունները պետք է կառուցել այլ հարթության մեջ՝ ելնելով *հայկական համակարգի* կայացման անհրաժեշտությունից:

## ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ Ռուբեն Խուրշուդյան

Խորհելով մտավորականության մասին՝ նախ եւ առաջ հարկ է կոչումը զատել գործառույթից: Կրթված, ստեղծարար ձիրք ունեցող մտավոր խավի գործառույթն ունի սոցիալական-տնտեսական բնույթ: Դա մտավոր արժեքների վերարտադրումն է, որոնք հանվում են վաճառքի՝ դառնալով, այդպիսով, նշյալ խավի նյութական գոյատեւման աղբյուրը: Մինչդեռ մտավորականության կոչումը թեւեւ կապված է գործառույթի հետ (այն չափով, որքանով վերջինս կատարում է հոգեւոր նշան ունեցող մտավոր արժեքների վերարտադրման խողովակի դերը), սակայն ունի մաքուր հոգեւոր բնույթ եւ, բնականաբար, շատ ավելի լայն ընդգրկում:

Ամերիկյան հայտնի սոցիոլոգ Թուրոթ Պարսոնսը, մշակելով հասարակության հիմնական պահանջները հայեցակարգը, հատուկ ուշադրություն էր դարձնում *նմուշի վերարտադրման* հիմնադրույթին, որը բնորոշում էր իբրեւ «*ա) հասարակությունում ինստիտուցիոնալ արժեքների հիմնական նմուշի պահպանում, բ) հասարակության նկատմամբ անձի պատշաճ շարժառիթային պարտավորությունների ձեւավորում եւ պահպանում*»:

Նմուշի վերարտադրումը հասարակությունում կատարում է մտավորականությունը՝ հասարակական կարծիքի ձեւավորման միջոցով: Գերիշխող հասարակական կարծիքը ստանում է տվյալ ազգի ակտուալ արժեքների եւ վարքի նորմերի տեսք, որոնց շնորհիվ եւ կարգավորվում է ազգային օրգանիզմի գործունեությունը: Ավելին, արժեքները եւ նորմերը, փաստորեն ունենալով չգրված օրենքների կարգավիճակ, որոշակի պարագաներում ընդհանրացվելով, կարող են հասարակության կողմից պարտադրվել պետությանը արդեն որպես իրավաբանական օրենք:

Ելնելով վերոշարադրվածից՝ մտավորականության կոչումը կայանում է՝ *ա) նեղ իմաստով՝ ազգային բարոյական արժեհամակարգի եւ վարքականոնի պահպանման եւ ստեղծագործական զարգացման մեջ, բ) լայն իմաստով՝ ազգային կյանքի կարգավորման եւ դրանով իսկ ազգային հասարակության ձեւավորման ու կայացման մեջ*: Ավելորդ չենք համարում նշել, որ ի տարբերություն մտավորականության գործառույթի, մտավորականության կոչումը չի նախատեսում որեւէ նյութական պարգեւ:

Դեռևս նախորդ դարի 40-ական թվականներին Գարեգին Նժդեհը ձեռակերպեց ազգային կյանքի կարգավորմանը վերաբերող մի շարք կարեւոր սկզբունքներ, առանց որոնց իմացության՝ յուրաքանչյուր կարգավորման փորձ դատապարտված է ձախողման: Դրանք են՝

1. Ազգային բարոյականը ազգի հոգեւոր կառույցի անհրաժեշտ հիմքն է եւ դրանում է ազգի իրական ուժը: Ազգային բարոյականը ենթադրում է օրինակարգ եւ հանրապարտադիր ընթացք, որից ամեն շեղում համարվում է հոգեւոր մահափորձ ազգի դէմ:

2. Առաջընթացի բնական ընթացքը (ժողովրդի կյանքի կառուցման, պետական սարք ու կարգի հաստատման) – նախ օրենքները հաստատվում են հոգիների մեջ, վերջը ընդունում սահմանադրության ձեւ: Հասարակական խղճմտանքը արդյունք չէ պետական օրենքների, ընդհակառակը, օրենքներն են հայելին հասարակական հոգու: Իշխանությունը դառնում է օրինականացյալ անիշխանություն, երբ ընդհանուր խղճմտանքի վերահսկում չկա:

3. Ամեն բարեփոխում պիտի սկսվի խղճմտանքից: Սոցիալական խնդիրը բարոյական խնդիր է: Օրենքը փոխելուց առաջ փոխիր մարդը: Նա, ով ասում է ես ամեն բանից առաջ, ամեն բանից վեր – չի կարող ծառայել ո՛չ գաղափարի, ո՛չ դրոշակի, ո՛չ ցեղի: Ազգային հավաքական երջանկությունը հնարավոր է միայն հաղթահարված - եւ ոչ ընդամենը սանձված - Ես-ի հայրենիքում:

Այս սկզբունքների կիրառումը ենթադրում է դժվարին նախապայմանների կատարում՝ հողեղեն Ես-ի հաղթահարում եւ խղճմտանքի հոգեւոր տիրապետության հաստատում, ինչը հնարավոր չէ առանց Աստծո հավատի: Այդ կապակցությամբ Նժդեհը գրում է. *«Նա, ով ընդունում է Աստուծո գոյությունը, ընդունում է նաեւ իր պարտականությունը հանդէպ գերագույն իրականությանց - ազգ, հայրենիք, պետություն: Ուզում եք խորապես ճանաչել մեկին՝ խոսե՛ք եւ խոսեցրե՛ք նրան Աստուծո մասին, եւ նա իր պաշտանքի կամ անհավատության միջոցով պիտի մատնե իր հոգեւոր հասակը: Անաստված ես, ասել է՝ զուրկ ես սրբության նվիրումից, պարտականության զգացումից, ասել է՝ վաղ թէ ուշ դու պիտի դավաճանես նմաններիդ»:*

Հավատը գորեղ է գործերով: Ճշմարիտ հավատացյալը նա է, ում հավատն ու գործը լիովին ներդաշնակ են: Հայկ Ասատրյանը, պարզաբանելով մտավորականի գործելակերպին հոգեւոր շունչ պարգեւելու երեւույթը, նշում է, որ մտավորականը պիտի գործի այնպես, որպես թէ տիեզերքը իր կամքի արտահայտությունն է եւ Աստված՝ իր խղճմտանքի

հղացումը: Աստվածապաշտությունը ճշմարտագործություն է, եւ ճշմարիտ նպատակները միայն կարող են մտավորականին մղել իմաստալից գործունեության: *«Շատ բան, – եզրակացնում է Ասատրյանը, – եւ ճակատագրականը, լինում է անգիտակցականի, – դուք ասեք՝ Աստուծո կամքով: Չաղթանակ – դա հնարավոր է, երբ մետաֆիզիկական ուժերն են մարտնչողի առաջնորդը, երբ վերջինն զգում է, որ բացարձակ մի ուժ գործում է իր մեջ»:*

Աստծո ոգով ներշնչված, նրա կամքին հաղորդակից դարձած մտավորականի մոտ օրգանապես միահյուսվում են ինչպես հոգեւոր կոչումը, այնպես էլ սոցիալական գործառույթը: Իր մտավոր գործունեության արդյունքը՝ լինի գյուտ, գիրք, քանդակ, կտավ, մեղեդի, կինոժապավեն եւ այլն, պարունակում է հզոր հոգեւոր լիցք:

Չոգեւոր կոչման եւ սոցիալական-տնտեսական գործառույթի միահյուսման պարագայում շոշափելիորեն ուրվագծվում է Վահան Տերյանի մեծ գաղափարի, հայ մտավորականության գերնպատակի կենսագործումը, որը բանաստեղծը բանաձեւել է հետեւյալ կերպ. *«Չպետք է կամենանք մեր հույսը եւ ապագան «նյութական Չայաստան» գաղափարի վրա հիմնել, այլ պիտի տենչանք ու աշխատենք «Չոգեւոր Չայաստանի» համար»:*

Չոգեւոր Չայաստանը՝ հայ հասարակությունն է, որտեղ գործում են հոգեւոր օրենքները եւ որտեղ մտավորականները հոգեւոր իշխանությունն են. այստեղ համատեղ թագավորում են Գիտությունն ու Մշակույթը, ուր լավը հաղթել է վատին, արդարն՝ անազնիվին, բարին՝ չարին:

Ո՞րն է Չոգեւոր Չայաստանի նեցուկը: Մեր համոզմամբ՝ դա հայոց քրիստոնեական աշխարհընկալումն է:

Չամաձայն Նիկողայոս Ադոնցի, կրոնական նշանավոր վարդապետությունները, որ երեւացել են, միշտ հուժկու դրոշմ են թողել եւ միանգամայն բնորոշել ազգերի պատմական քաղաքակրթական ինքնահատկությունը: *Մի ազգ, եթե գոյություն ունի եւ պիտի ունենա, նրա համար է, որ քաղաքակրթական պատմության մեջ իր սեպուհ էջը գրավի:* Եթե այդպիսի կոչումը զգացվում է, անհրաժեշտ է յուրապես զարգանալ, սեփական ընդունակությունները յուրովի բաց անել, այլապես ասած՝ ազգային անհատականություն մշակել: *«Մեզանում, մեր անհատականության ու ինքնուրույնության պատկերը հանդիսանում է նշանակորեն մեր Եկեղեցին».* արձանագրում է պատմաբանը:

Ադոնցյան այդ դիտարկմանը հարկ ենք համարում հավելել հետեւյալը: Ըստ հասարակական կարծիքի ֆրանսիական ինստիտուտի նախագահ Ժան Ստոնցելի կատարած միջազգային հետազոտության, *ժամա-*

*նակակից աշխարհի արժեքները սկզբունքորեն միանման են բոլոր արեւմտյան երկրների համար եւ համընկնում են Լեռան քարոզի տասը պատվիրանների հետ:*

Դա նշանակում է, որ քրիստոնեական արժեհամակարգի ազդեցության ոլորտը պարունակում է հսկայական հոգեւոր տարածություն: Չոգեւոր Չայաստանը չի կարող գոյատեւել եւ զարգանալ կղզիացած փոխադարձ կապը այդ աշխարհի հետ, հիմնված համանման արժեհամակարգի վրա, կբերի ինչպես միջազգային լավագույն հոգեւոր արժեքների նմուշների ներմուծմանը, այնպես էլ տեղական նմուշների արտահանմանը: Սա է հոգեւոր-քաղաքակրթական գլոբալացման միակ, ճշմարիտ ձեւը, որը զերծ է ազգային խտրականությունից եւ համապատասխանում է քրիստոնեության էությանը, բովանդակությանը:

Ամփոփելով նյութը՝ կամենում ենք վերահաստատել, որ Չայրենիքը մտավորականի համար առաջին հերթին հոգեւոր հասկացություն է, նույնպես, ինչպես եւ հայրենատիրությունը: *Տիրել Չայրենիքին՝ նշանակում է տեր կանգնել հայրենի հոգեւոր հարստությանը, պահպանել այն եւ բազմապատկել – հավիտենական լուսավոր խնդիր, որի լուծման համար եւ կոչված է մտավորականը:*

Չոգեւոր Չայաստանի գաղափարից դուրս նյութական հողեղեն խավարն է, ուր բնակվում են, Նժդեհի որակմամբ, ստամտավորականները, որոնք անկոչ են, ուրեմն՝ անցողիկ եւ ժամանակավոր:

## **ՎՐԱՑ-ՅԱՐԱՎՕՍԱԿԱՆ ՅԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ** **Կարեն Վերանյան**

Հաջողությամբ լուծելով աջարական հիմնախնդիրը՝ Վրաստանի իշխանությունները փորձեցին շարունակել երկրի պետաիրավական հարցերի կարգավորման գործընթացը: Սկզբնական շրջանում բարձրացվեց Աբխազիայի հարցը, որի շուրջ, կարելի է ասել, որոշակի «փոխհամաձայնություն» էր կայացել ռուս-վրացական կողմերի միջև: Դա հիմնավորվում է նրանով, որ չնայած պաշտոնական Թբիլիսիի կողմից հնչեցվող հայտարարություններին, Աբխազիայի շուրջ ընթացող բանավեճերը, ի տարբերություն Հարավային Օսիայի, բավականին «հարթ» անցան: Դեռ ավելին, հուլիսի սկզբներին Մ. Սահակաշվիլին հայտարարեց, թե Աբխազիայի հարցի կարգավորումը կպահանջի 2-3 տարի:

Վրաց-հարավօսական հակասությունները սրվեցին ս. թ. մայիսի կեսերին եւ լարվածության հասան մասնավորապես Վ. Պուտինի եւ Մ. Սահակաշվիլու՝ Մոսկվայում կայացած հանդիպումից մի քանի օր հետո:

### **Պաշտոնական Թբիլիսիի դիրքորոշումը**

Հարավային Օսիայի իշխանությունների վրա Վրաստանի ղեկավարության գործադրած հոգեբանական ճնշումներին, որպես կանոն, հաջորդում են սադրիչ, ապակայունացնող գործողություններ, ասել է թե՛ «սպառնալիք հնչեցնելն առավել արդյունավետ է, քան կիրառելը»: Մաքսանենգության դեմ պայքարի պատրվակով ս.թ. մայիսի 31-ին Վրաստանի իշխանությունները հակամարտության գոտում հաստատեցին իրենց ռազմական ներկայությունը: Գործադրվող ճնշումներին զուգահեռ Վրաստանի իշխանություններն իրենց պատրաստակամությունը հայտնեցին՝ Հարավային Օսիային ընձեռել ինքնիշխանության այն աստիճանը, ինչն ունի Հյուսիսային Օսիան Ռուսաստանի կազմում, վերաբացել Վրաստանի ու Հարավային Օսիայի միջև երկաթուղային հաղորդակցումը, որը չէր գործում 1991թ. ի վեր:

Իրավիճակն էլ ավելի սրվեց այն բանից հետո, երբ հունիսի 1-ին Վրաստանի հատուկ նշանակության զորքերը շրջափակեցին Գորի-Ցխինվալ մայրուղու երկայնքով տեղակայված օսական գյուղերը (վերո-

նշյալ գյուղերը Ցխինվալի հետ կապող ճանապարհին անցնում է վրացաբնակ շրջաններով):

### **Հակամարտության սրացումը**

Իրավիճակը խիստ սրվեց, երբ վրացական իրավապահները «մաքսանենգության դեմ պայքարի» պատրվակով արգելեցին Ռուսաստանից Ռոքրի թունելով եւ Հարավային Օսիայի տարածքով դեպի Վրաստան եկող ապրանքների մուտքը: Հարավային Օսիայի իրավապահներն իրենց հերթին շրջափակեցին Վրաստանի ներքին շրջաններից Հարավային Օսիայի Լիախվիի ու Պրոնիի կիրճերի վրացական գյուղեր տանող ճանապարհները: Դեռ ավելին, հուլիսի 8-ին Հարավային Օսիայի 200 հոգուց բաղկացած զինյալ մի խումբ վաղ առավոտյան մտավ Լիախվի կիրճի վրացական Վանաթի գյուղ, ձերբակալեց գյուղում գտնվող Վրաստանի ՆԳՆ ներքին զորքերի 50 զինծառայողների ու ծնկի բերեց շրջանի հրապարակներից մեկում:

Հակամարտության գոտում սկսվեց փոխհրաձգություն: Ի պատասխան վրացի իրավապահների կողմից արձակված կրակահերթերի, Հարավային Օսիայի ռազմական ուժերը սկսեցին գնդակոծել շրջափակման ենթարկված վրացաբնակ Թամարաշենի, Նիկոզի, Էրեդվի, Արդվիսի գյուղերը: Այս ամենը լուրջ ընթացք ստացավ մասնավորապես հուլիսի 11-ին, երբ նռնականետներից կրակ արձակվեց վրացական Թամարաշենի գյուղի միջնակարգ դպրոցի վրա (Թամարաշենի գյուղը գտնվում է Ցխինվալից ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա): Փոխհրաձգության արդյունքում զոհվեցին 16 վրացի զինծառայող: Կրակահերթերը առժամանակ ընդհատվեցին օգոստոսի վերջին:

### **Ռուս-վրացական հարաբերությունների սրացումը**

Վրաց-հարավօսական հակամարտությունն ի սկզբանե վերածվեց ռուս-վրացական հակասության: Հարավային Օսիայում, որի բնակչության գերակշռող մասը ՌԴ քաղաքացիներ են, զգալի է Ռուսաստանի թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական ազդեցությունը: Այստեղ ռուսական ազդեցության լծակների պահպանումը պաշտոնական Մոսկվայի համար առաջին հերթին անվտանգության խնդիր է:

Վրաստանի իշխանությունները ձգտում են հարցը միջազգայնացնել, որի արդյունքում միջազգային հանրության ճնշման տակ կթուլանան Ռուսաստանի դիրքերը: Մ. Սահակաշվիլին հանդես եկավ կտրուկ



հայտարարություններով, մասնավորապես՝ ստեղծված իրավիճակի համար հիմնական պատասխանատվությունը զգելով ոչ թե Հարավային Օսիայի նախագահ Էդ. Կոկոյտիի, այլ Ռուսաստանի եւ ռուս խաղաղապահների վրա: Նա ազդարարեց նաեւ 1992թ. Դազոմիսյան համաձայնություններից Վրաստանի դուրս գալու մասին (1992թ. հունիսի 24-ին Վրաստանի պետխորհրդի ղեկավար Էդ. Շեւարդնաձեն, ՌԴ նախագահ Բ. Ելցինը Դազոմիսում ստորագրեցին Հարավային Օսիային վերաբերող համաձայնագիր, ըստ որի՝ հակամարտության գոտում հուլիսի 14-ից վերահսկողությունը սկսեցին իրականացնել Խաղաղության աջակցման խառը ուժերը): Հայտարարությունն անմիջականորեն ուղղված էր Մոսկվայի դեմ, քանի որ Դազոմիսյան պայմանավորվածությունները չեղյալ հռչակելով՝ Վրաստանի ղեկավարությունը հարցականի տակ է դնում հակամարտության գոտում տեղակայված ռուս խաղաղապահ ուժերի ներկայության հարցը: Վրաստանի ղեկավարությունն էլ ավելի առաջ անցավ՝ առաջարկելով վրաց-հարավօսական լարվածության չեզոքացման նպատակով՝ գերտերությունների ղեկավարների մակարդակով միջազգային համագումար հրավիրել:

### **ԱՄՆ ղեկավարության արձագանքը**

Եթե աջարական ճգնաժամի ողջ ընթացքում ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնյաները (գլխավորապես ԱՄՆ պետքարտուղար Բ. Փաուելը, ԱՄՆ պաշտոնական ներկայացուցիչ Ռ. Բաուչերը) անմիջապես արձագանքում էին զարգացումներին՝ հարցի կարգավորումը տեսնելով Ա. Աբաշիձեի իշխանության տապալման, Աջարիայում գործող զինյալ խմբավորումների զինաթափման համատեքստում, ապա Հարավային Օսիայի դեպքում Բ. Փաուելը առաջին անգամ հանդես եկավ հունիսի սկզբին, այն էլ ոչ թե հարավօսական հիմնահարցի կարգավորման, այլ՝ Վրաստանից ռուսական ռազմակայանների դուրսբերման կոչով (հունիսի 28-29-ին Ստամբուլում կայացած ՆԱՏՕ զագաթաժողովում Ռուսաստանի առջեւ կրկին դրվեց Վրաստանից ու Մերձդնեստրից ռուսական ռազմակայանների դուրսբերման հարցը): Դեպքերի զարգացումներին ամերիկյան երկրորդ արձագանքը վերաբերում է հուլիսի 8-ին, երբ ԱՄՆ պետդեպարտամենտը պահանջեց Հարավային Օսիայի ղեկավարությունից ազատ արձակել Վրաստանի ներքին զորքերի 50 ձերբակալված զինծառայողներին: Հակամարտության գոտում փոխհրաձգությունների ակտիվացման արդյունքում ԱՄՆ ղեկավարությունը որոշակիորեն մեղմեց ռուսական կողմի հասցեին հնչեցրած հայտարարությունների

սրությունը՝ որպես միջնորդ հանդես գալու կոչ անելով: Դա կարելի է տրամաբանական համարել, եթե նկատի ունենանք այն, որ այս գործընթացները զուգահեռաբար են Վրաստանում ռուս խաղաղապահներին այլ ձեւաչափով փոխարինելու, տարածաշրջանում ԵԱՀԿ գործունեությունն ակտիվացնելու միտումներին:

### **Մ. Սահակաշվիլու այցը Միացյալ Նահանգներ**

Ա.թ. հուլիսի սկզբին Վրաստանի նախագահ Մ. Սահակաշվիլին ոչ պաշտոնական այցով մեկնեց Միացյալ Նահանգներ: Նա հանդիպումներ ունեցավ ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելի, պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդի եւ ԱՄՆ նախագահի՝ ազգային անվտանգության գծով խորհրդական Կոնդոլիզա Ռայսի հետ: Այցն ուշագրավ է հատկապես այն առումով, որ տեղի ունեցավ այն ժամանակ, երբ սրվել էին ռուս-վրացական հարաբերությունները: Վերլուծաբաններից շատերի կարծիքով, այցի նպատակը Հարավային Օսիայի եւ Աբխազիայի հիմնախնդիրների շուրջ Թբիլիսիի ու Մոսկվայի հարաբերությունների սրման պայմաններում Վաշինգտոնի կողմից աջակցություն ստանալն էր: Սակայն հաշվի առնելով Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ եղած հակասությունների պատմական ու իրական պատճառները՝ ԱՄՆ ղեկավարությունը Վրաստանի նախագահի խնդրանքին բավականին զգուշաբար մոտեցավ՝ կողմերին միայն կոչ անելով տարածաշրջանները հարթել դիվանագիտական ճանապարհով:

Մ. Սահակաշվիլին օգոստոսի 5-ին, պետքարտուղար Ք. Փաուելի հետ հանդիպումից հետո, հայտարարեց, թե «վրացական կողմը իրադրության կայունացման ու ռուսական կողմի հետ երկխոսության շարունակման հույս ունի եւ չի ցանկանում հակամարտել վերջինիս հետ»: ԱՄՆ պետքարտուղարը հայտնեց հակամարտությանը «միջնորդելու» ԱՄՆ մտադրության մասին: Պարզ դարձավ, որ Ջ. Բուշի վարչակարգի համար կարելուր դիվանագիտական քայլերից է Ռուսաստանի հետ հարաբերությունների «փափկացումն» ու բարելավումը: Պաշտոնական Վաշինգտոնը Վրաստանի իշխանություններին հավաստիացրեց, որ ամերիկյան ազգային շահն այսօր պահանջում է ավելի շուտ հարթել հակասությունները ՌԴ-ի հետ, քան ողջունել Վրաստանի ղեկավարության որդեգրած մարտավարությունը:

### **Եվրամիության, Ուկրաինայի եւ Թուրքիայի ակտիվացումը**

Վրաց-հարավօսական հակամարտությունն ի սկզբանե միջազգայնացվեց. հակամարտության մեջ ներքաշվեցին ոչ միայն Ռուսաստանն ու ԱՄՆ-ը, այլև՝ ԵՄ-ն: Վերջինս ուշադիր հետեւում էր նաեւ աջարական զարգացումներին, որտեղ եւ բախվեցին ԱՄՆ ու Եվրոպայի շահերը: Վրաց-հարավօսական հարաբերություններում զգալի շահագրգռվածություն ցուցաբերեց նաեւ ԵԱՀԿ-ն: Արդեն հուլիսի 15-ին ԵԱՀԿ գործող նախագահ, Բուլղարիայի արտաքին քաղաքական տեսչության ղեկավար Սողոմոն Պասին Մ. Սահակաշվիլու հետ հեռախոսազրույցում շեշտում էր «վրաց – հարավօսական հակամարտության խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը» (քննարկվել է նաեւ հակամարտության գոտում ԵԱՀԿ լայնածավալ ներկայության հարցը):

Հարավկովկասյան տարածաշրջանի զարգացումների նկատմամբ յուրահատուկ շահագրգռվածություն է ցուցաբերում նաեւ Մեծ Բրիտանիան: Մ. Սահակաշվիլու խոսքերով, Լոնդոնը շահագրգռ է, որպեսզի Վրաստանը դառնա «կարելի միջազգային խաղակողը»: Պաշտոնական Լոնդոնը զգալի նշանակություն է տալիս Վրաստանի կայունությանը: Ավելին, Վրաստանը տարածաշրջանի այն տրանսպորտային հանգույցն է, որը կարող է մեծ տնտեսական հնարավորություններ ընձեռել Արեւմուտքին: Վերլուծաբաններից շատերն են հանգել այն տեսակետին, ըստ որի՝ տարածաշրջանում ամերիկա-բրիտանական դիրքերի ամրապնդումը կարող է հանգեցնել նրան, որ Ռուսաստանը դուրս մղվի Կովկասից:

Բրիտանացի սպաներն ու ռազմական հրահանգիչները սկսել են պաշտոնապես աշխատել Վրաստանում դեռեւս հունիսի վերջից, երբ Վրաստան էին ժամանել Մեծ Բրիտանիայի զինված ուժերի հետեւակային երկու վաշտ՝ Թբիլիսիից ոչ հեռու տեղակայված Վազիանիի ռազմական բազայի՝ բրիտանական կողմի վարձակալած հրաձգարանում ռազմադաշտային զորավարություններ կազմակերպելու նպատակով:

Վրաց-հարավօսական հակամարտությանը ներքաշվելու իր պատրաստակամությունն է հայտնում նաեւ Ուկրաինան: Վերջինս առաջարկում է որպես միջնորդ հանդես գալ Հարավային Օսիայի ու Աբխազիայի հիմնախնդիրների կարգավորման հարցում: Ուկրաինայի իշխանությունները կողմ են հանդես գալիս նաեւ Վրաստանում միջազգային կազմակերպությունների, այդ թվում եւ ԵԱՀԿ-ի, դիտորդների թվի ավելացմանը, ինչպես եւ նրանց գործունեության ընդարձակմանը:

Հարավկովկասյան գործընթացներին սկսել է ավելի ակտիվորեն ներգրավվել Թուրքիան՝ ՆԱՏՕ առանցքային անդամ երկրներից մեկը, որի իշխանությունները դեռևս ս.թ. օգոստոսի կեսերին պատրաստակամություն հայտնեցին ընդգրկվել Վրաստանում խաղաղապահ ուժերի «միջազգայնացման» գործընթացին՝ դրանով վրաց-հարավօսական հակամարտության մեջ ներքաշելով նաև Հյուսիսատլանտյան դաշինքին:

### **Հետևություններ**

Վրաց-հարավօսական հակամարտությունը տարածաշրջանում տիրապետող դիրքեր հաստատելու համար մղվող պայքար է, որում ներգրավված են ուժի տարբեր կենտրոններ: Այն հետևանք է կովկասյան տարածաշրջանում տեղի ունեցող գլոբալ աշխարհաքաղաքական, տնտեսական գործընթացների, որոնց մի մասն են կազմում նաև Հյուսիսային Կովկասում առկա անկայունությունը, Ռուսաստանում վերջին ամիսների ընթացքում արձանագրված ահաբեկչական գործողությունները եւ այլն:

Հակամարտության վերջին զարգացումների արդյունքում պաշտոնական Թբիլիսին հարկադրված եղավ (նաև ԱՄՆ ճնշման տակ) որոշակիորեն զիջել դիրքերը, սակայն դա չպետք է ընդունել միանշանակորեն: Ակնհայտ է, որ վրաց-հարավօսական հակամարտության գոտում հարաբերությունների ժամանակավոր սառեցումը ակնկալում է հետագա այլ սցենարներ:

## **ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԻՐԱՆԻ ՇՈՒՐՋ ՍԵՒԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ**

*Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) 2004թ. հուլիս ամսվա որոշումները հիմք հանդիսացան, որպեսզի ԱՄՆ-ը եւ Իսրայելը Իսլամական Հանրապետության դեմ նոր քարոզարշավ ծավալեն: Սակայն այս անգամ Իրանը մեղադրվում էր ոչ միայն միջուկային զենք ստեղծելու փորձերի, այլև Ալ-Ղաիդա ահաբեկչական կազմակերպության հետ հատուկ կապերի, սեպտեմբերի 11-ի ահաբեկչության կազմակերպման մեջ:*

Բուն ԱՄՆ-ում վերջին հակաիրանական քարոզարշավի հիմք հանդիսացավ ամերիկյան Կոնգրեսի՝ սեպտեմբերի 11-ի ահաբեկչության հետաքննության հանձնաժողովի հրապարակած հաշվետվությունը, որի համաձայն իրանական հատուկ ծառայությունները մասնակցություն են ունեցել ահաբեկչության կազմակերպմանը: Ըստ հանձնաժողովի ներկայացրած հաշվետվության՝ ահաբեկչության 8-10 մասնակիցներ 2000–2001թթ. եղել են Իսլամական Հանրապետությունում, որտեղ համապատասխան հատուկ ծառայությունները նրանց ապահովել են «մաքուր անձնագրեր», որոնցում ոչ մի նշում չի արվել այն մասին, որ վերը նշված անձինք մուտք են գործել Իրանի տարածք: Նման հայտարարությունը միանգամից կասկածանքների տեղիք է տալիս. պարզ չէ, թե ինչու է Իրանը աջակցել Ալ-Ղաիդայի ահաբեկիչներին, որոնք հայտնի են եղել իրենց հակաիրանական քաղաքականությամբ, ինչը թալիբների իշխանության տարիներին վեր էր ածվել Աֆղանստանի պաշտոնական քաղաքականության:

Ամերիկյան Կոնգրեսի հաշվետվությունից մի քանի օր առաջ եւ հետո իրար հաջորդեցին ԱՄՆ իշխանությունների հակաիրանական հայտարարությունները: Այսպես, հաշվետվության հրապարակումից մեկ օր առաջ ԱՄՆ պետական քարտուղար Ք. Փաուլը հայտարարեց, որ «եթե Իրանը շարունակի զարգացնել իր միջուկային պոտենցիալը եւ չզնա ծագած հակասությունների դիվանագիտական ճանապարհով լուծմանը, ԱՄՆ-ը չի բացառում Իրանի միջուկային օբյեկտները գրոհելու հնարավորությունը»: Մի քանի օր անց ԱՄՆ պաշտպանության նախարար Դ. Ռամսֆելդը, խոսելով Իրանի միջուկային ծրագրի մասին, հայտարարեց, որ «երբեմն հարկ

*է առաջանում հասցնել պրեվենտիվ հարվածներ, ինչպես դա եղավ Աֆղանստանի օրինակում»:*

Օգոստոսի կեսերին ԱՄՆ պետական քարտուղարի տեղակալ Ջ.Բոլթոնը հայտարարեց, որ Իրանի միջուկային ծրագրի մասին ԱԷՄԳ վերջին որոշման նախագիծը ներկայացրած եվրոպական եռյակի (Ֆրանսիա, Գերմանիա, Մեծ Բրիտանիա ներկայացուցիչների հետ իր խոսակցությունների ժամանակ նա պարզել է, որ իրանական ներկայացուցիչները եվրոպացիներին հայտնել են, թե Իրանը համապատասխան նպատակ դնելու դեպքում կարող է մի քանի ամսվա ընթացքում ստեղծել միջուկային զենք: Բոլթոնը այս հայտարարությունն արեց՝ նպատակ ունենալով ցույց տալ, որ Իրանը իրականում շատ մոտ է միջուկային զենքի ստեղծմանը, ինչը կարող է ԱՄՆ-ին դրդել «վճռական քայլերի» Իրանի դեմ: Ինչեւէ, շատ կարելի է փաստ կլիներ, եթե, իհարկե, եվրոպական երեք պետությունների ներկայացուցիչները հաստատեին իրանցիների արած այդ հայտարարության իրականությունը: Սակայն սեպտեմբերի սկզբին Գերմանիայի արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչը նշեց, որ իրենք «չեն կարող հաստատել Բոլթոնի խոսքերը»: Օգոստոսի վերջին նման հայտարարությամբ հանդես եկավ նաեւ Ֆրանսիան:

Հետաքրքիր են իրանական ղեկավարության արձագանքները ԱՄՆ մեղադրական եւ ռազմատենչ հայտարարությունների վերաբերյալ: Նշենք Իրանի հեղինակավոր եւ ազդեցիկ ղեկավարներից մեկի՝ երկրի նախկին նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիի հայտարարությունը, որը ամերիկյան ղեկավարությանը բնորոշեց Ալ-Ղաիդայի հիմնական պաշտպան եւ օթեւան հատկացնող պետություն, իսկ նրա ներկայացրած մեղադրանքները՝ անհեթեթ: Նշենք, որ այս հայտարարությունը նա արեց Թուրքիայի վարչապետ Էրդողանի հետ բանակցությունների ավարտից հետո: Հատկանշական է, որ թուրք բարձրաստիճան պաշտոնյան այս հարցի վերաբերյալ կատարեց ոչ պակաս կոշտ հայտարարություն, ասելով որ իմպերիալիստական պետությունները ահաբեկչության դեմ ուղղված կեղծ կարգախոսները օգտագործում են ի նպաստ իրենց շահերի:

Ի՞նչ նպատակներ կարող են ունենալ ԱՄՆ՝ Իրանի դեմ ներկայացրած մեղադրանքները:

Ռուսաստանյան հայտնի փորձագետ Դ.Եվստաֆեւը գտնում է, որ Բուշի վարչակազմի հիմնական նպատակն է գտնել քավության նոխագ, որին կարելի կլինի մեղադրել ամերիկյան արտաքին քաղաքականության անհաջողությունների մեջ: Նրա խոսքերով, այսօր Իրանից բացի՝ ԱՄՆ-ը չունի որեւէ այլ թեկնածու «թշնամի համար մեկ» թափուր պաշտոնը

գրադեցնելու համար, իսկ Իրանի վրա հարձակվելու վերջնական որոշում ամերիկացիները պարզապես չունեն:

Այլ կարծիքի է ռուսական մեկ այլ փորձագետ՝ Ա. Սոբյանինը, որի կարծիքով՝ «սկսվել է Իրան՝ ամերիկյան ներխուժման լրատվական նախապատրաստումը, որը տեւելու է առնվազն մեկ տարի»: Սակայն Սոբյանինի խոսքերով՝ Իրանի վրա հարձակումը շատ լուրջ հարց է, եւ ամերիկացիները ստիպված կլինեն երկար նախապատրաստական աշխատանք տանել: Սոբյանինը նշում է, որ Իրանի դեմ հնարավոր հարձակման համար ամերիկացիները հավանաբար կօգտագործեն Իրաքի զինված ուժերը, որոնք շուտով մեծ աջակցություն կստանան ամերիկյան ռազմատեխնիկայի տեսքով:

Իրաքի՝ Իրանի դեմ պատերազմում հնարավոր մասնակցության մասին խոսքերն այդքան էլ մեծ ուշադրություն չէին գրավի, եթե չլինեին Իրաքի ժամանակավոր կառավարության պաշտպանության նախարարի՝ Իրանի դեմ մեղադրական եւ ռազմատենչ հայտարարությունները:

Ամերիկյան «Վաշինգտոն փոստ» թերթին տված հարցազրույցում Իրաքի ժամանակավոր կառավարության պաշտպանության նախարար Խազեմ Շաալանը մի քանի կոշտ հայտարարություն արեց Իրանի վերաբերյալ: Ըստ նրա՝ Իրանը գրավել է Իրաքի մի քանի սահմանային կետեր, որոնցով զինված ահաբեկիչներն առանց որեւէ խոչընդոտի թափանցում են Իրաքի տարածք: Շաալանի պնդմամբ՝ «Իրանն այսօր մնում է Իրաքի թիվ մեկ թշնամին»: Նա նաեւ հայտարարեց, որ «եթե Իրանը չդադարեցնի իր գործունեությունը իրաքյան ժողովրդի դեմ, ապա իրաքյան կողմը, բոլոր իրաքցիների պահանջով, ստիպված կլինի պատասխան գործողությունների դիմել: Եվ այդ ժամանակ այն արյունը եւ մահը, որոնք իրանցիների օգնությամբ ահաբեկիչները բերում են Իրաք, նույն ձեւով կհայտնվեն իրանական փողոցներում»:

Չարկ է նշել, որ Իրաքի պաշտպանության նախարարի այս հայտարարությունը անակնկալ էր ոչ միայն Իրանի, այլ նաեւ Իրաքի ժամանակավոր կառավարության անդամների համար: Իրաքի վարչապետ Ալավին հայտարարեց, որ իր պետությունը ոչ մի թշնամանք չունի Իրանի նկատմամբ, իսկ բոլոր տարածայնությունները կարող են լուծվել խաղաղ, բանակցային ճանապարհով: Իրաքի արտաքին գործերի նախարարի տեղակալ Խամիդ Ալբայաթին Շաալանի հայտարարությունը համարեց անհիմն եւ անթույլատրելի:

Պարզ է, որ ամերիկյան կողմը ինտենսիվ աշխատանք է տանում իրաքյան որոշ ղեկավարների հետ, եւ բացառված չէ, որ հեռանկարում, ինչպես նշել էր Սոբյանինը, ամերիկացիները աշխատեն նոր Իրաքի

միջոցով ստեղծել կառավարելի քառս իրանա - իրաքյան հարաբերություններում, որը կարող է հանդիսանալ պատերազմական գործողությունների սկիզբ:

Որքա՞ն է իրական Իրանի միջուկային օբյեկտներին հարված հասցնելու հնարավորությունը: Մինչ այս հարցին անդրադառնալը նշենք, որ որպես հնարավոր հարված հասցնող կողմ ավելի շատ քննարկվում է Իսրայելը, քան Միացյալ Նահանգները: Սակայն նույն Իսրայելում Իրանին հարված հասցնելու անհրաժեշտության մասին կարծիքները տարբեր են: Հիշեցնենք, որ Իսրայելը 1981 թվականին արդեն կատարել է համապատասխան հարձակում Իրաքի Օզիրակ միջուկային կենտրոնի վրա: Այն ժամանակ Իսրայելի գլխավոր շտաբի ղեկավարը հայտարարեց, որ «Իրաքի վրա հարձակում կատարելու ընդամենը մեկ այլընտրանք կա, դա Իսրայելի բնաջնջումն է»: Սակայն իսրայելական որոշ փորձագետների կարծիքով՝ ներկայում իրավիճակն այլ է:

Իսրայելական փորձագետ Է.Կամի կարծիքով՝ Իրանի դեպքը բացարձակապես տարբեր է Օզիրակից, եւ ներկայում Իսրայելը ավելի մեծ միջազգային աջակցության կարիք ունի, քան Իրաքի դեպքում: Այդ աջակցությունը, սակայն, հիմնականում պայմանավորված է միայն ԱՄՆ գործոնով: Բացի դրանից, ի տարբերություն իրաքցիների, որոնք իրենց միջուկային ողջ ծրագիրը կենտրոնացրել էին Օզիրակ կենտրոնում, Իրանի միջուկային օբյեկտները սփռված են երկրի ողջ տարածքով, այդ թվում՝ Թեհրանում եւ Սպահանում: Վերջին հանգամանքը բարդացնում է հարվածներ հասցնելու հնարավորությունը, սպառնում առաջ բերել բազմաթիվ զոհեր խաղաղ բնակչության շրջանում: Այս մասին 2003-ին ասաց նաեւ Իսրայելի պաշտպանության նախարար Շ.Մոֆազը, որը, իմիջիայլոց, Իրանից է ներգաղթել:

Մեկ ուրիշ իսրայելական քաղաքագետ՝ Շ.Բարը, գտնում է, որ օդային հարվածները Իրանի միջուկային օբյեկտներին «հարվածիք եւ փախիք» սկզբունքով ոչ մի օգուտ չեն տա եւ ավելի կբարդացնեն իրավիճակը:

Յ.Ստեյնեցի կարծիքով՝ Իսրայելը այսօր չպետք է միակողմանի հարված հասցնի Իսլամական Հանրապետությանը: Ինչ վերաբերում է ԱՄՆ իշխանություններին, ապա նրանք Իրանի միջուկային ծրագիրը առայժմ խաղարկում են զուտ նախընտրական նպատակներով եւ չեն հարվածի Իրանին, քանի որ հարեւան Իրաքում տեղաբաշխված են իրանցիների պոտենցիալ թիրախ հանդիսացող ամերիկյան զորքերը:

Մեր կողմից ավելացնենք, որ հարվածը Իրանին մեծ բացասական արձագանք կառաջացնի աշխարհում, ասենք Ռուսաստանում, որը կարող է կորցնել բազմաթիվ շահավետ պայմանագրեր Իրանում: Բացի այդ,



ցանկացած տիպի ռազմական ակցիա Իրանի դեմ կարող է վտանգել «Հյուսիս–Հարավ» ռուս-իրանա-հնդկական տրանսպորտային միջանցքի գործունեությունը, որի ստեղծման համար Ռուսաստանն իր տարածքում արդեն հարյուր միլիոնավոր դոլարներ է ծախսել: Բացի դրանից, բողոքի մեծ ալիք կարող է բարձրանալ մահմեդական աշխարհում, ինչը Աֆղանստանում, ում ներկայիս իշխանական էլիտային ԽՍՀՄ-ի եւ թալիբների հետ պայքարի ժամանակ Իրանը երկար տարիներ աջակցել է, եւ Իրաքում տեղակայված ամերիկյան զորքերի համար կարող է կործանիչ հետեւանքներ ունենալ:

Այս ամենը հաշվի առնելով՝ կարող ենք եզրակացնել, որ իրանական միջուկային օբյեկտների վրա հարձակումը առնվազն ամերիկացիների կողմից մոտակա շրջանում քիչ հավանական է: Իսկ արդեն մեկ տարի հետո, երբ սկսվի Բուշերի ատոմակայանի աշխատանքը, այդ հարվածների հնարավորությունը էլ ավելի կնվազի: Ինչ վերաբերում է Իսրայելին, ապա այն կարող է որոշակի գործողությունների դիմել Իրանի դեմ, սակայն դրանց հետեւանքները կարող են ցավալի լինել նաեւ Իսրայելի համար, քանի որ ժամանակակից Իրանն ավելի մեծ հնարավորություններ ունի պատասխան հարված հասցնել Իսրայելին, քան 1981-ին Իրաքը:

Իսկ ինչ մնում է Իրան ամերիկյան ներխուժման հնարավորությանն ընդհանրապես, ապա մնում է հուսալ, որ Իրանը կկարողանա զերծ մնալ ռազմական կոնֆլիկտի մեջ ներքաշվելուց:

**ԻՐԱՔՅԱՆ ՃԳՆԱԺԱՍՆ ԵՎ ԲԱԶՄԱԲԵՎԵՌ  
ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ  
Գագիկ Տեր-Չարությունյան**

Ինչպես հայտնի է, ս.թ. հունիսի 28-ին իշխանությունն Իրաքում հանձնվեց որոշակի իրավասություններով լիազորված տեղական իշխանություններին: Այդ արարողությունը, ինչպես նաև ՄԱԿ-ի ավելի վաղ ընդունած որոշումը (որն ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Չինաստանի եւ Ռուսաստանի միջև մասնակի փոխհամաձայնության հետեւանք էր) փոխեցին Իրաքում տեղակայված ԱՄՆ եւ նրա դաշնակիցների մոտ 150 հազարանոց զինուժի կարգավիճակը. դրանք այսուհետ որակվում են ոչ թե օկուպացիոն, այլ ՄԱԿ-ի որոշումով լեգիտիմացված ուժեր: Խոսվում է նաև այն մասին, որ զինուժը կարող է դուրս բերվել Իրաքից, եթե այդ երկրում 2005թ. սպասվելիք ընտրությունների արդյունքում ձեւավորված իշխանությունները նման հարց բարձրացնեն:

Վերոհիշյալ որոշումները եւ քայլերը պետք է ընկալել որպես իրաքյան հիմնախնդրի հետ կապված զարգացումների մի հերթական փուլի ավարտ եւ նորի սկիզբ: Սակայն, ըստ էության, դրանք սկզբունքորեն չփոխեցին Իրաքում եւ տարածաշրջանում տիրող իրավիճակը. նախկինի պես շարունակվում են այս կամ այն տիպի ամենօրյա ռազմական գործողությունները, ինչը հիմք է տալիս համոզմունք հայտնել, որ ԱՄՆ եւ առավել եւս՝ իրաքյան նոր իշխանությունների կողմից իրադրությունը դեռ չի վերահսկվում: Համաձայն լրատվամիջոցներում եւ վերլուծական գրականությունում հայտնված հիմնավոր կանխատեսումների, ստեղծված իրավիճակի բարելավում դեռեւս չի սպասվում: Ավելին, վերլուծական հանրության զգալի մասի կողմից իրադրությունն Իրաքում ընկալվում է եթե ոչ ճգնաժամային, ապա՝ բավական մոտ այդ իրավիճակին:

Նման իրավիճակը էապես ազդում է գլոբալ ռազմաքաղաքական գործընթացների վրա: Ստեղծված իրադրությունում նկատելի է ԱՄՆ եւ նրա դաշնակիցների դիրքերի երեւում: Որպես այդ գործընթացի տրամաբանական հետեւանք՝ ուրվագծվում է ԱՄՆ մենատիրության դեմ հանդես եկող ուժի եւ քաղաքական կամքի կենտրոնների ստեղծումը:

Բացառված չէ, որ զուգահեռ ընթացող այդ զարգացումներն ի վերջո կարող են ապագայում հանգեցնել բազմաբեւեռ աշխարհակարգի ձեւավորմանը:

### **«Տեղեկատվական կերպարի» վատթարացում**

Հայտնի է, որ ԱՄՆ ռազմավարության կարելուր բաղադրիչներից են հնուտ կազմակերպված եւ նպատակաուղղված տեղեկատվական գործողությունները կամ, այլ խոսքով՝ տեղեկատվական սպասարկումը: Մինչ ռազմական գործողություններ սկսելը, ԱՄՆ-ը, օգտագործելով իրաքյան զանգվածային ոչնչացման զենքի մասին առասպելը, Ս. Հուսեյնի բռնապետ լինելը եւ քրդերի դեմ քիմիական զենք կիրառելու իրողությունը, վարում էր արդյունավետ տեղեկատվական-հոգեբանական պատերազմ: Նման պատերազմի բոլոր կանոններով վարվող քարոզչության շնորհիվ ձեւավորվեց Իրաքի եւ նրա առաջնորդի տեղեկատվական կերպարը, որը մարմնավորում էր իսլամական ահաբեկչությունը եւ նույնացվում Բեն Լադենի կերպարի հետ:

Սակայն Իրաքը օկուպացնելուց հետո տեղեկատվական զարգացումներն ընդունեցին այլ՝ ԱՄՆ-ի համար անցանկալի բնույթ: Ամերիկյան քարոզչության դեմ տեղեկատվական դաշտում գործող հակաթեզերը հետեւյալն են.

❖ Իրաքում զանգվածային ոչնչացման զենք չէր մշակվում: ԱՄՆ եւ Մեծ Բրիտանիայի ղեկավարությունը հատուկ մտադրություններով մոլորեցնում էր սեփական ժողովրդին եւ միջազգային հանրությանը:

❖ ԱՄՆ ղեկավարության նպատակը ոչ թե Իրաքում ժողովրդավարություն հաստատելն էր, այլ այդ երկրի նավթին տիրապետելը: Որպես այս վարկածի ճյուղավորում՝ շրջանառության մեջ են դրվել նախագահ Բուշի, փոխնախագահ Չեյնիի եւ ամերիկյան վարչակազմի այլ անդամների Իրաքում ունեցած տնտեսական շահերի վերաբերյալ նյութեր:

❖ Իրաքում կռաւիցիոն ուժերի եւ տեղի վարչակարգի դեմ այսօր ընթացող ռազմական գործողություններն արդեն բնութագրվում են ոչ թե որպես ահաբեկչություն, այլ՝ դիմադրություն «օկուպանտներին»: Իրաքում գործում են ոչ թե ահաբեկիչներ, այլ ապստամբներ, որոնք պայքարում են սեփական երկրի ազատագրման համար: Բաղդադի Աբու Գրեյբ

բանտում ամերիկացիների կողմից իրաքցիներին կտտանքների ենթարկելու վերաբերյալ փաստերի հրապարակումը էապես նսեմացրեց ամերիկյան զինուժի կերպարը՝ զրկելով նրան «Իրաքի ժողովրդին ազատագրողի» տեղեկատվական կարգավիճակից:

❖ Հարկ է նշել, որ Միացյալ Նահանգների «կերպարի» վատթարացումը վկայում է այն մասին, որ «պիառային» պատերազմում ԱՄՆ-ի դեմ հանդես են գալիս տեղեկատվական զգալի ռեսուրսների տիրապետող ուժեր: Այստեղ պետք է կարելորել եվրոպական, ռուսաստանյան եւ իսլամական աշխարհի լրատվամիջոցների գործունեությունը, որոնք արտահայտում են իրենց երկրների քաղաքական դեկավարությունների մոտեցումները: Հակաիրաքյան կոալիցիայի երկրներում ակտիվ էին այն լրատվամիջոցները, որոնք հանրությանն էին հասցնում քաղաքական ընդդիմության կարծիքը:

Որպես վերոհիշյալ հանգամանքների հետեւանք՝ ոչ միայն իսլամական երկրներում, այլեւ եվրոպայում, ԱՄՆ-ում եւ Մեծ Բրիտանիայում տեղի են ունենում բազմաթիվ ցույցեր՝ ուղղված իրաքյան պատերազմի դեմ: Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերը ստիպված էր ներողություն խնդրել հանրությունից «չհիմնավորված պատերազմ» սանձազերծելու համար: ԱՄՆ վարկն աշխարհում, համաձայն բազմաթիվ հարցումների, այսօր խիստ ցածր մակարդակի վրա է: Կարելի է արձանագրել, որ ԱՄՆ-ը տեղեկատվական պատերազմի ոլորտում խոշոր կորուստներ է կրում եւ, առաջին անգամ վերջին մի քանի տասնամյակում, զիջել է առաջատարությունը հանրային կարծիքի ձեւավորման խնդրում:

### ***Կոալիցիայի պառակտում***

Ի տարբերություն 1991թ. Պարսից ծոցի առաջին պատերազմի, 2003թ. ԱՄՆ-ը լուրջ դժվարություններ ունեցավ հակաիրաքյան կոալիցիայի ձեւավորման գործում: Անգամ ԱՄՆ մերձավոր դաշնակից Մեծ Բրիտանիան եվրոպական երկրների հետ հարաբերությունների եւ մերձավորարեւելյան խնդիրների հանդեպ որոշ դեպքերում ցուցաբերում է ուրույն մոտեցումներ: Ջարգացումներն Իրաքում հանգեցրին նրան, որ այս կամ այն պատրվակով կոալիցիան լքեցին եւ իրենց զորամիավորումներն Իրաքից դուրս բերեցին ԱՄՆ գործընկերներ Իսպանիան,

Ֆիլիպինները եւ մի շարք այլ երկրներ: Իրաքը լքելու իրենց մտադրությունների մասին են հայտնել Լեհաստանի, Ուկրաինայի եւ մի շարք այլ երկրների ղեկավարություններ: Ամերիկացիները փորձում են նրանց փոխարինել նոր դաշնակիցներով՝ առաջարկելով, օրինակ, Ուզբեկստանին \$160 մլն եւ նյութական այլ փոխհատուցումներ:

Իրաքյան Քուրդիստանի վերաբերյալ հայտնի տարածայնությունները զգալիորեն խարխլեցին ԱՄՆ–Թուրքիա հարաբերությունները: Քրդական հարցը լարվածություն առաջացրեց նաեւ Իսրայելի եւ Թուրքիայի միջեւ (թուրքերը որպես առիթ օգտագործեցին իսրայելա-պաղեստինյան հակամարտության մի դրվագը):

Շահերի ընդհանրությունը հակաքրդական եւ հակաիսրայելական հարցերում սերտացնում է Իրան–Թուրքիա–Սիրիա հարաբերությունները: Կարեւոր է ընդգծել նաեւ Սաուդյան Արաբիայի պահը. ամերիկյան ուղղակի եւ անուղղակի ճնշումները ստիպեցին այդ երկրի ղեկավարությանը խորհել իր արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացման մասին եւ անգամ հայտարարել ԱՄՆ-ից իր կապիտալների (մոտ \$200 մլրդ) դուրսբերման մասին:

***Ուժի նոր կենտրոնների եւ բազմաբևեռ աշխարհակարգի ձեւավորման միտումները***

Ներկայիս հակաահաբեկչական պատերազմը հարուցել է գործընթացներ, որոնք այս կամ այն չափով ուղղված են համաշխարհային գործերում ամերիկյան մենատիրության դեմ: 2004թ. ամռանը տեղի ունեցած «Մեծ ութնյակի» եւ դրան հաջորդած ՆԱՏՕ վեհաժողովները վեր հանեցին շահերի այն հակասությունները, որոնք օբյեկտիվորեն գոյություն ունեն մի կողմից՝ մայրցամաքային եվրոպայի, Ռուսաստանի եւ մյուս կողմից՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի միջեւ: «Մեծ ութնյակում» գոյություն ունեցող տարածայնությունները վերաբերում էին Իրաքի հիմնախնդրին. Ֆրանսիայի, Գերմանիայի եւ Ռուսաստանի ղեկավարները, ինչպես եւ նախկինում, դեմ արտահայտվեցին իրենց ռազմական ստորաբաժանումները Մերձավոր Արեւելք ուղարկելու ամերիկյան ծրագրին: ԱՄՆ ռազմավարությանը ավելի զուսպ, բայց հետեւողականորեն դեմ է արտահայտվում Չինաստանը: Այս ամենը որոշ վերլուծաբանների հիմք է տալիս խոսել եվրասիական աշխարհաքաղաքական առանցքների ձեւավորման մասին: Գուցեւ նման հետեւությունը

վաղաժամ է, սակայն եվրասիական առաջատար տերությունների միջեւ հաստատվում են ասոցիատիվ ռազմաքաղաքական կապեր, որոնք ունեն զարգացման բոլոր հեռանկարները:

Շատերը որպես ԱՄՆ հիմնական մրցակից տեսնում են բուռն տնտեսական զարգացում ապրող Չինաստանին: Հաճախ է նշվում 2020թ., երբ համաձայն կանխատեսումների՝ Չինաստանի եւ ԱՄՆ տնտեսական ու ռազմական ոլորտի ցուցանիշները համեմատելի կդառնան: Սակայն առանձնապես պետք է կարելուրել չինական գաղափարախոսական համակարգը, որը երբեմն անվանում են «կարմիր կոնֆուցիոնիզմ»: Չինական ավանդական արժեքային համակարգը, չնայած տնտեսական ոլորտում շուկայական մեխանիզմների լայն ներդրմանը, առայժմ չի ենթարկվում ազատական գաղափարների ազդեցությանը:

ԱՄՆ մենատիրական քաղաքականությանը լուրջ մարտահրավեր է նաեւ եվրամիության (որը երբեմն անվանում են «կորպորատիվ կայսրություն») ընդլայնումը եւ հզորացումը: Մոտ 450 մլն բնակչություն եւ \$10 տրիլիոնի հասնող համախառն ներքին արտադրանք ունեցող ԵՄ-ն իր տնտեսական ցուցանիշներով ընդհուպ մոտեցել է ԱՄՆ-ին, իսկ եվրոն հաջող մրցակցում է դոլարի հետ: Ընթացքի մեջ է եվրոպական զինված ուժերի ձեւավորումը, ինչը կարող է արժեզրկել Յուլիսաստլանտյան դաշինքի դերը եւ նշանակությունը:

ԱՄՆ-ԵՄ հակասությունները ներառում են նաեւ քաղաքակրթական ոլորտը: Այսօր ընթանում է միասնական արեւմտյան քաղաքակրթության ամերիկյան եւ եվրոպական մասերի տրոհում: Հանտինգտոնի կողմից ձեւակերպված «միացյալ արեւմտյան քաղաքակրթություն» հասկացությունն արդեն չի համապատասխանում իրականությանը: Քաղաքակրթական հարթությունում պետք է դիտարկել նաեւ եվրոպա-Իսրայել հակասությունների խորացումը: Հատկանշական է, որ ամերիկյան «ճեղքները», մահմեդական որոշ երկրների եւ Յուլիսային կորեայի կողքին, ԱՄՆ թշնամիների թվին են դասում նաեւ Ֆրանսիային:

Բնականորեն, մայրցամաքային եվրոպական տերությունների գործողությունները հանդիպում են ԱՄՆ եւ Մեծ Բրիտանիայի հակազդեցությանը՝ ուղղված առաջին հերթին Ֆրանսիայի եւ Գերմանիայի շուրջ հետագա եվրահետեզրման գործընթացների դեմ: Սակայն թվում է, թե Ֆրանսիայի նախկին արտգործնախարար Յուրբեր Վեդրինի խոսքերն այն մասին, թե «Եվրոպան պետք է ստեղծի հակակշիռ ԱՄՆ գերակայությանը բազմաբեւեռ աշխարհում», հեռու չեն իրականություն դառնալուց:

Ուժի նոր կենտրոնների ձեւավորման տեսանկյունից կարելուր դերա-

կատարում ունի Ռուսաստանը: Նշենք, որ վերլուծական հանրության մի մասը, թերեւս տպավորված ԽՍՀՄ փլուզման եւ 1990-ական թվականների Ռուսաստանի պետականության աննախադեպ անկման փաստից, աշխարհաքաղաքական հաշվարկներում անտեսում է այդ տերության հնարավորությունները: Մինչդեռ Ռուսաստանը վերջին տարիներին բարելավում է իր տնտեսական իրավիճակը եւ դանդաղ, բայց հետեւողականորեն վերականգնում քաղաքական դիրքերը:

Քաղաքական համերաշխությունն Իրաքի հարցում, փաստորեն, խթանեց Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Գերմանիայի միջեւ միջպետական կապերի ամրապնդումը: Դրանով պետք է բացատրել այն փաստը, որ այսօր Ռուսաստանը սակավ հիվանդագին է ընկալում ԵՄ եւ ՆԱՏՕ առաջխաղացումը դեպի Արեւելք: Միեւնույն ժամանակ Ռուսաստանը, կիրառելով զանազան քաղաքական եւ տնտեսական ձեւաչափեր (Կոլեկտիվ անվտանգության պայմանագրի կազմակերպություն, Եվրագես եւ Միացյալ տնտեսական տարածք), փորձում է ինտեգրել իր շուրջը ԱՊՀ երկրներին: Ամրապնդվում են կապերը նաեւ Չինաստանի հետ, եւ այստեղ պետք է կարելուրել «Շանհայի համագործակցության կազմակերպությունը», որի ազդեցությունն աճի միտումներ ունի: Տիրապետելով հզոր միջուկային զենքի ու ռազմական տեխնոլոգիաների եւ ի տարբերություն եվրոպական տերությունների՝ ունենալով լայն աշխարհաքաղաքական տարածքներում քաղաքականություն վարելու կայսերական փորձ, Ռուսաստանը նախկինի պես մնում է ԱՄՆ հիմնական մրցակիցը Եվրասիայում:

Իրաքյան ճգնաժամի հետեւանքով ուժի նոր կենտրոնների ձեւավորման տեսանկյունից եւ մերձավորարեւելյան տարածաշրջանում կատարվող զարգացումների համատեքստում անհրաժեշտ է կարելուրել Իրանի գործունը: Համաձայն որոշ տվյալների, այդ երկիրը Իրաքում շիաների հակաամերիկյան շարժումը կազմակերպելու համար ծախսում է ամսական մինչեւ \$60-70 մլն: Հաշվի առնելով այն ազդեցությունը, որն իրաքյան պատերազմի հետեւանքով ձեռք է բերել Իրանը տարածաշրջանում, որոշ մեկնաբաններ անգամ ծայրահեղական կարծիք են հայտնում, թե իրաքյան պատերազմն ամենից շատ ձեռնտու էր Իրանին: Ուշադրության արժանի է նաեւ այն, որ եթե Իրանը նախկինում գործում էր փոքր-ինչ մեկուսացված, ապա այսօր նրա հարաբերությունները ԵՄ-ի եւ Ռուսաստանի հետ ավելի դինամիկ են զարգանում:

Ամփոփելով վերը ներկայացվածը՝ կարելի է փաստել, որ իրաքյան պատերազմը խթանել է ուժի եւ քաղաքական կամքի նոր կենտրոնների ձեւավորման գործընթացը: Այդ կենտրոններից յուրաքանչյուրն առանձին այսօր ի զորու չէ դիմագրավել ԱՄՆ-ին: Սակայն նրանց համաձայնեցված գործողությունները լրջորեն խոչընդոտում են ԱՄՆ ռազմավարությանը: Եվրասիական տարածքում կարելի է արձանագրել ռազմաքաղաքական եւ տնտեսական նոր ձեւաչափերի առաջացում, որոնք դուրս են ամերիկյան վերահսկողությունից: Այս ամենը կարելի դիտարկել որպես միտում բազմաբևեռ աշխարհակարգի ձեւավորման ուղղությամբ:



**ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԱՄՆ ՆԵՐՔԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ  
Սարգիս Հարությունյան**

Ա. Սուլյն թվականի օգոստոսի 27-ին ամերիկյան CBS հեռուստա-ընկերության երեկոյան եթերում «60 րոպե» հաղորդման թղթակից Լեսլի Սթեյլը նշեց, թե Հետաքննությունների դաշնային բյուրոն (ՀԴԲ-FBI) ունի ծանրակշիռ փաստեր, որոնք վկայում են Պենտագոնում աշխատող «խլուրդի» մասին, ով գաղտնի փաստաթղթեր է փոխանցել Իսրայելին՝ ներառյալ «Սպիտակ տան գաղտնի մտորումները Իրանի վերաբերյալ»:

CBS-ի այդ հաղորդագրությունը, փաստորեն, առաջինն էր, որ երեւան հանեց արդեն մոտ մեկ ու կես տարի ընթացող գաղտնի հետաքննությունը, որի մասին, ըստ առկա հրապարակումների, տեղյակ էին միայն ԱՄՆ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը, նրա տեղակալ Փոլ Վուլֆովիցը, Ջորջ Բուշ-կրտսերի ազգային անվտանգության գծով խորհրդական Կոնդոլիզա Ռայսը եւ նրա օգնական Ստեֆան Հեյլին:

Հետագայում պարզվեց, որ «խլուրդը» աշխատում է քաղաքական հարցերով Ռամսֆելդի օգնական Դուգլաս Ֆեյթի գրասենյակում գործող՝ Մերձավոր Արեւելքի եւ Հարավային Ասիայի բաժնում (ղեկավար՝ Ուիլյամ Լյուքի), որպես Իրանի հարցերով վերլուծաբան: Նշենք, որ այն ստորաբաժանումում, որը Պենտագոնում գլխավորում է Դուգլաս Ֆեյթը, աշխատում են մոտ հազար հինգ հարյուր մարդ:

The Washington Post-ը օգոստոսի 28-ի համարում հրապարակեց կասկածյալի անունը՝ Լոուրենս Ֆրանկլին, որը պահեստում գտնվող ԱՄՆ օդուժի գնդապետ է: Գնդապետ լինելուց զատ, Ֆրանկլինը Միացյալ Նահանգների պաշտպանության նախարարությունում երկար տարիներ զբաղվել է վերլուծական աշխատանքով: Մինչեւ 1990-ական թթ. սկիզբը Ֆրանկլինը համարվում էր Խորհրդային Միության մասնագետ: ԽՍՀՄ փլուզումից հետո Ֆրանկլինը սովորում է պարսկերեն եւ Պենտագոնի պաշտպանության հետախուզության գործակալությունում (ՊՀԳ-DIA) իր աշխատանքն է շարունակում Մերձավոր Արեւելքի գծով (մասնագիտացումը՝ Իրան): Երեք տարի առաջ՝ 2001թ., Լոուրենս Ֆրանկլինը ՊՀԳ-ից տեղափոխվում է Ֆեյթի գրասենյակ (Պենտագոնի քաղաքական հարցերով բաժանմունք), որտեղ 2001թ. սեպտեմբեր 11-ից հետո ստեղծվում են երկու առանձին հատուկ բաժիններ՝ «Հակաահաբեկչական գնահատ-

ման խումբ» եւ «Հատուկ ծրագրերի գրասենյակ» (ՀԾԳ): Ֆրանկլինը աշխատանքի անցավ հենց ՀԾԳ-ում (գլխավորում էր վերոհիշյալ Ուիլյամ Լյուքը), որն էլ զբաղված էր Իրաքում զանգվածային ոչնչացման զենքերի գոյության եւ Ալ-Ղաիդայի հետ Սադամ Հուսեյնի կապերի «հիմնավորմամբ»:

ՀԾԳ-ում Լոուրենս Ֆրանկլինը աշխատում էր Իրանի ուղղությամբ: Հատկապես նրա ուշադրության կենտրոնում էին Իրանի հավանական կապերը ահաբեկչական կազմակերպությունների հետ: Հայտնի է, որ այդ նպատակով ավելի որոշակի տեղեկություններ ձեռք բերելու ակնկալիքով 2001թ. դեկտեմբերին Հռոմում եւ Փարիզում նա իր գործընկերոջ հետ հանդիպել է Իրանի ներկայիս վարչակարգի նկատմամբ ընդդիմադիր կեցվածք ընդունած մի շարք մարդկանց հետ:

ՀԾԳ փակվելուց հետո հիսունն անց Ֆրանկլինը շարունակեց գործել վերը նշված Մերձավոր Արեւելքի եւ Հարավային Ասիայի բաժնում եւ մոտ էր թոշակի անցնելուն:

**Բ.** ՀԳԲ պնդումների համաձայն, անցած տարի Լոուրենս Ֆրանկլինը Ամերիկա-իսրայելական հասարակական հարաբերությունների կոմիտեի (ԱԻՀԳԿ. համարվում է ԱՄՆ-ում հրեական ամենահզոր լոբբիստական կազմակերպություններից մեկը, ունի մոտ 65.000 անդամ) աշխատակիցներ Սթիվեն Ռուզենի (կոմիտեի քաղաքական բաժնի ղեկավար) եւ Քեյթ Վեյսմանի (Իրանի հարցերով փորձագետ) միջոցով իսրայելական երկու դիվանագետների է փոխանցել Իրանի վերաբերյալ Պենտագոնի գաղտնի որոշ փաստաթղթեր՝ ներառյալ նույն Իրանի նկատմամբ դեռեւս նախագծային փուլում գտնվող Սպիտակ տան մոտեցումների որոշ տարբերակներ («Նախագահական հրահանգներ»): Բնականաբար, թե՛ ԱԻՀԳԿ-ն, թե՛ պաշտոնական Թեյ Ավիվը հերքում են այդ տեղեկությունները:

Գաղտնի փաստաթղթերը փոխանցելուց զատ, առկա է եւս մեկ կարեւոր (ըստ էության՝ ավելի կարեւոր) հարց. ԱՄՆ ազգային անվտանգության տեսանկյունից որքանով է վնասաբեր Լոուրենս Ֆրանկլինի գործունեությունը՝ Իրանի նկատմամբ ԱՄՆ քաղաքականության գործում: Այլ կերպ ասած՝ առաջանում է Միացյալ Նահանգների անվտանգության կառույցների վերլուծական բաժինների միջոցով նույն ԱՄՆ քաղաքականության վրա Իսրայելի ազդեցության խնդիրը:

Հարկ է նշել, որ անցած երեք տարիների ընթացքում ԱՄՆ արտաքին ու հատկապես ռազմական քաղաքականությունների վրա մեծացել է, այսպես կոչված, նեոկոնների ազդեցությունը, որոնց մի զգալի մասը կենտրոնացած է Պենտագոնում. Պաշտպանության խորհրդի նախկին

նախագահ, իսկ այժմ սոսկ անդամ Ռիչարդ Փերլը, նույն Փոլ Վուլֆովիցը եւ Դուգլաս Ֆեյթը: Չհաշված մասնավորապես Վուլֆովիցի եւ Ֆեյթի հրեական ծագումները, այդ գործիչները տարիների ընթացքում աչքի են ընկել Իսրայելի հետ իրենց յուրահատուկ կապերով:

Դուգլաս Ֆեյթը մինչեւ Պենտագոնում աշխատանքի անցնելը Արիել Շարոնի «Լիկուդ» կուսակցության խորհրդականն էր: Բավական երկար ժամանակ նա աշխատել է նաեւ ներկայում Իսրայելում կենտրոնացած ոմն Մարկ Ջելլի իրավաբանական ընկերությունում:

Ռեյգանի վարչակազմում Ֆեյթի անմիջական ղեկավար Ռիչարդ Փերլը, 1969թ. Սենատի հետախուզական հանձնաժողովում աշխատելու ժամանակ, Իսրայելին է փոխանցել ԽՍՀՄ վերաբերյալ ԿՅՎ պատրաստած մի գաղտնի զեկույց: Իսկ 1978թ. Վուլֆովիցը, որն այն ժամանակ ԱՄՆ պաշտպանության նախարարի տեղակալն էր սպառազինությունների նկատմամբ վերահսկողության գծով, մեղադրվեց արաբական մի երկրի ամերիկյան զինտեխնիկայի հավանական վաճառքի վերաբերյալ փակ բնույթի տեղեկություններ Իսրայելին փոխանցելու մեջ: Հետագայում, ճիշտ է, այդ մեղադրանքները Վուլֆովիցի վրայից հանվեցին:

Լրտեսական այս սկանդալի հետ Պենտագոնի «բազենների» առնչությունը բացատրվում է նրանով, որ Ֆրանկլինը անմիջական կապ ուներ նույն Վուլֆովիցի եւ Ֆեյթի հետ: Պատահական չէ, որ օգոստոսի 29-30-ին ՅՊԲ հետ հատուկ «զրույցներ» են ունեցել նույն Ուիլյամ Լյութին, Դուգլաս Ֆեյթը եւ Փոլ Վուլֆովիցը:

**Գ. Հիմնական եզրակացությունները բաժանվում են երեք մասի:**

Առաջին՝ ըստ ամենատարածված վարկածի, որը հատկապես խրախուսվում է իսրայելական ՁԼՄ եւ հրեական վերահսկողության ներքո գտնվող ամերիկյան լրատվամիջոցների կողմից, լրտեսական այդ սկանդալը սանձազերծել են Բուշ-կրտսերի այն հակառակորդները, որոնք նպատակ ունեն վարկաբեկել ԱՄՆ ներկայիս վարչակազմի մերձավորարեւելյան քաղաքականությունը, խնդիրներ առաջացնել Բուշ-կրտսերի նախընտրական արշավում եւ ընդհանրապես՝ լարվածություն մտցնել ԱՄՆ – Իսրայել հարաբերություններում: Հիմնական փաստարկն այն է, որ Վաշինգտոն – Թել Ավիվ հարաբերությունները այնքան սերտ են, որ իսրայելական կողմը գրեթե ցանկացած բնույթի տեղեկություն ստանում է դիվանագիտական աղբյուրներով, ուստի եւ կարիք չկա զբաղվել լրտեսությամբ:

Երկրորդ՝ պետք է ենթադրել, որ այդ սկանդալը ԱՄՆ միջգերատեսչական պայքարի արդյունք է: ԿՅՎ-ն եւ ամերիկյան հետախուզական

հանրությունը դժգոհ են, որ Պենտագոնը ներխուժել է իրենց ոլորտ, եւ փաստորեն նույն Իրաքի ու Իրանի հարցերում Սպիտակ տանը կարծես թե գերակշռում է Դոնալդ Ռամսֆելդի ղեկավարած գերատեսչության տեսակետը: Թերևս, ԿՀՎ-ում վերջին փոփոխություններից հետո ամերիկյան հետախուզական թիվ մեկ գործակալությունը որոշել է Պենտագոնին «ցույց տալ իր տեղը»՝ վարկաբեկելով վերջինիս առանցքային պաշտոնյաներին:

Սակայն, մեր կարծիքով, իրադարձությունը ի ցույց է դնում շատ ավելի լայն մի գործընթաց:

Սույն թվականի հուլիսի 20-ին The Washington Times-ում Ջրիգնել Բժեզինսկին հանդես եկավ առաջին հայացքից բավականին անակնկալ հայտարարությամբ: Վերլուծելով Մերձավոր Արեւելքում ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը՝ նա կոչ էր անում Բուշ-կրտսերի վարչակազմին վերանայել հարաբերությունները Իրանի հետ: Այդ առումով երկրորդ ուշագրավ փաստը The National Interest ամսագրի այս տարվա վերջին համարում (Summer, 2004) Ֆրենսիս Ֆուկույամայի հրապարակած The Neoconservative Moment հոդվածն է, որտեղ հեղինակը քննադատում է Բուշ-կրտսերի վարչակազմը՝ Մերձավոր Արեւելքում առկա իրավիճակի գնահատման իսրայելական տարբերակն ընդունելու համար:

ԱՄՆ ներկայիս նախագահական ընտրություններում, ըստ էության, հրեական գործոնը դարձել է քննարկումների առաջնային առարկա: Մել Գիբսոնի «Քրիստոսի չարչարանքները» ֆիլմից մինչեւ Ֆրենսիս Ֆուկույամայի հոդվածը օրգանական առումով կապված են Լոուրենս Ֆրանկլինի լրտեսական պատմության գաղափարական ֆոնի հետ:

## ԱՐՎԵՍՏԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ Արաքս Փաշայան

Ձեւավորվելով իբրեւ կրոն՝ իսլամը սահմանեց արաբամահմեդական հասարակության բարոյականության, իրավունքի եւ կենցաղավարության նորմերը՝ միաժամանակ պայմանավորելով գեղագիտական չափանիշների եւ մշակութային ավանդույթների կախվածությունը տեսական-դավանաբանական դրույթներից: Գեղարվեստի զարգացումը ենթարկվեց կրոնական բարոյականության սկզբունքներին: Արվեստի առանձին ճյուղերի նկատմամբ որդեգրվեց յուրօրինակ մոտեցում:

Իսլամական իրականության մեջ արվեստը, զարգանալով կրոնի հետ փոխազդեցությամբ, ներառում էր սահմանափակ ոլորտներ: Իսլամն արգելում էր կենդանի արարածների պատկերումը նկարի կամ քանդակի միջոցով, որ պայմանավորված է կռապաշտության նկատմամբ իսլամի խիստ մերժողական կեցվածքով եւ միակ աստծո կամ միասնության (*աթթաուհիդ*) գաղափարն անխաթար պահելու ցանկությամբ: Պատմական իրողությունն է, որ միաստվածության գաղափարախոսության հաղթանակից հետո իսլամի հետեւորդները ոչնչացրին գրեթե բոլոր հեթանոսական կուռքերը:

Կենդանի արարածների կերպավորման արգելքն ունի այլ կռվաններ եւս. թույլ չտալ մարդուն իր ստեղծագործական գործունեությամբ մրցակցել աստծո հետ: Ըստ այդմ՝ կենդանի մարդուն ծնունդ տվողն արարիչն է: Սովորական մահկանացուն ի գորու չէ շարժման մեջ դնել նկարում կամ քանդակում պատկերված մարդուն կամ կենդանուն: Մարդը չի կարող ձեւավորել գոյի պատկեր:

Կերպարվեստի մերժման հանգամանքը կապված է նաեւ աստծուն պատկերելու հնարավորության բացառման հետ: Իսլամական ուսմունքի համաձայն՝ աստված միակ բացարձակն է, որին հնարավոր չէ տեսնել կամ շոշափել: Այս իրողությունն է վկայակոչում Ղուրանի 112-րդ սուրահը. «Ասա՛ նա է միակ աստված, աստված հավերժ է, չի ծնել եւ չի ծնվել, եւ չկա նրան հավասար մեկը»: Ուրեմն՝ աստծուն չի կարելի ներկայացնել նյութական, դեռ ավելին՝ պատկերել: Իսլամը բացառում է որեւէ կերպ, անգամ խորհրդանշորեն ներկայացնել աստվածային հիմքի որեւէ կոնկրետ ձեւ:

Միակ եւ բացարձակ աստծո գաղափարը հանգեցնում է պատկերի

վերացարկմանը կամ *դատարկությունը*: Իսլամը դեմ է աստվածային ներկայությանը (*ալ-հուդուր*) սրբապատկերում կամ պատկերում: Մարդն առանց տեսողական ընկալման պետք է փորձի ճանաչել եւ զգալ աստծուն: *Դատարկությունը* նպաստում է, որպեսզի աստված եւ աստվածային հայտնությունը չնույնացվեն ժամանակի, տարածության եւ կամ որեւէ առարկայի հետ: Իրականում *դատարկությունը* դատարկ չէ, այն աստծո արձագանքն է, խորհրդանիշը աստվածային անսահմանության եւ նրա ներկայության: Աստծո ներկայությունն ամենագո է, համատարած: Աստված ամենուր է, որ ուղղությամբ որ մարդ շարժվի: Այս իրողությունը շաղկապվում է *շահադայի*` միաստվածության գաղափարի հետ` «Չկա աստված բացի ալլահից»:

Իսլամի սուրբ գրքում բացահայտ կերպով արգելված չէ կենդանի արարածների պատկերումը: Սակայն Ղուրանում տեղ գտած առանձին դրույթներ, հետագայում զարգացում ապրելով, ամբողջացան *սուննայում* եւ *հադիսներում*:

*Չադիսներում* առավել հանգամանորեն են ներկայացված կերպարվեստի արգելքն արտացոլող փաստերը, որոնց հիման վրա *շարիաթը* համակարգեց պատկերավորման վերաբերյալ իսլամի հայեցակարգը: Խոսելով *շարիաթով* ամրագրված արգելքների մասին` մահմեդական աստվածաբանները հաճախ են վկայակոչում *հադիսները*: Ըստ այդմ` բոլոր նրանք, ովքեր կզբաղվեն կենդանի արարածների պատկերմամբ, Ահեդ դատաստանի օրը դաժան ճակատագրի կարժանանան: Պատկերվածները կիջնեն նկարներից, կպահանջեն ոգեշնչում, իսկ նկարիչները, չկարողանալով շնչավորել նրանց, կպատժվեն` այրվելով հավերժական կրակներում: Մուհամմադ մարգարեին են վերագրվում *հադիսներում* տեղ գտած խոսքերը, թե` Ահեդ դատաստանի օրը չարչարանքների կենթարկվեն նկարիչները, հրեշտակները չեն մտնի այն տունը, ուր դիմապատկերներ կլինեն:

XI-XIII դարերում մահմեդական աստվածաբանները կենդանի արարածների պատկերումը ծանրագույն մեղք էին համարում: Այդ պարագայում, բնական է, արժեվորվելու էին արվեստի այլ ճյուղեր: Քանի որ կենդանի արարածների պատկերումն արգելված էր, մզկիթները, Ղուրանը եւ կենցաղին վերաբերող առանձին առարկաներ գարդարվում էին երկրաչափական, բուսական եւ արձանագրային պատկերներով: Բարձր զարգացման հասան խճանկարչությունը, զարդանկարչությունը եւ գեղագրությունը, որ լայնորեն կիրառվում էին ճարտարապետական հարդարանքում եւ կիրառական արվեստում: Ուսումնասիրողների կարծիքով` արվեստի այդ ճյուղերը արաբամահմեդական յուրօրինակ մտածելա-

կերպի արդյունք են: Ինքնատիպ երեւոյթ է իսլամական զարդանախշը, որի առանձնահատկութիւններից են երկրաչափական, բուսական կամ տառային միահյուսումները: Իսլամական զարդանախշին հատուկ են ներդաշնակութիւնն ու ճոխութիւնը:

Իսլամի ողջ գոյության ընթացքում արվեստում այդպես էլ հնարավոր չեղավ խուսափել պատկերային դրվագներից: Մահմեդական արվեստագետներից շատերը ողջ միջնադարի ընթացքում պատկերել են մարդկանց եւ կենդանիների, ներկայացրել իրական, դիցաբանական եւ կրոնական տեսարաններ:

20-րդ դարի սկզբին արաբամահմեդական կարծր աշխարհընկալման մեջ դրական տեղաշարժեր փորձեց կատարել մահմեդական *իսլահի* (բարենորոգման) շարժումը, որի ամենահայտնի տեսաբաններից մեկը՝ եգիպտացի հասարակական, մշակութային եւ կրոնական գործիչ շեյխ Մուհամմադ Աբդոն, իր հրապարակած ֆեթվայում մահմեդականներին թույլատրում էր զբաղվել կերպարվեստով եւ քանդակագործությամբ, քանի որ կուռքերին երկրպագելու վտանգն անցել է:

Գիտության եւ մշակույթի զարգացման համատեքստում պատկերավորմանն առնչվող արգելքներն իսլամական հասարակութիւններում, ընդհանուր առմամբ, հաղթահարված են: Այսօր, որպես ժամանակի հրամայական, մահմեդականների համար սովորական երեւոյթ են դարձել մարդկանց լուսանկարումը, մանուկում դիմանկարների պատկերումը, կենդանի պատկերներով հեռուստահաղորդումների հեռարձակումը, կերպարվեստի զարգացումը եւ այլն:

Պատկերավորման արգելքի հետ կապված վիճելի հարցեր կան կինոարվեստի ոլորտում: 1970թ. եգիպտական մամուլում բուռն կերպով քննարկվում էր վաղ իսլամի պատմության էկրանավորման հարցը: Հիմնախնդիրը կապված էր իսլամի մարգարեի, նրա զինակիցների եւ ընտանիքի անդամների բեմական կերպավորման հետ: Ալ-Ազհարի համալսարանի նշանավոր շեյխերից մեկի կարծիքով՝ բեմական կերպավորմամբ կարելի է ներկայացնել լավագույն դեպքում մարգարեի զինակիցներին՝ պայմանով, որ նրանց դերակատարներն աչքի ընկնեն ազնիվ նկարագրով եւ օրինակելի վարքով, իսկ դերակատարումից հետո հրաժարվեն թատերական գործունեությունից: Մահմեդական մեկ այլ տեսաբանի կարծիքով՝ այդ ոլորտում եվրոպացիների փորձը չպետք է նախադեպ դառնա մահմեդականների համար:

Իսլամի մարգարեին կերպավորելու կամ նկարելու գաղափարի հետ մահմեդական աստվածաբաններն ու կրոնական հեղինակութիւնները մինչեւ օրս չեն հաշտվում: Ճիշտ է, կրոնական սյուժեներով կինոնկարներ

նկարահանվել են, սակայն առ այսօր որեւէ մեկը չի մարմնավորել իսլամի մարգարեի կերպարը: Կինոնկարում, առանձին դեպքերում, կարող է հնչել մարգարեի ձայնը, իսկ նկարներում մարգարեի դեմքը քողարկված է: Մահմեդական շրջանակները միաժամանակ գիտակցում են, որ կինոարվեստը կրոնական քարոզչության եւ հասարակական գիտակցության կրոնականացման հարցում բացառիկ կարեւոր միջոց է:

Փաստ է, որ պատկերավորման արգելքը խոչընդոտել է մահմեդական աշխարհում կերպարվեստի, քանդակագործության եւ այլ ճյուղերի զարգացմանը: Մահմեդական հեղինակներից շատերի կարծիքով՝ այն վնաս է հասցրել նաեւ բնական գիտությունների առանձին ոլորտների, մասնավորապես՝ անատոմիայի եւ անասնաբուժության ուսումնասիրությանը:

Այսօր իսլամի ավանդական տարածման շրջաններում շատ հազվադեպ կարելի է հանդիպել մարդկանց կամ կենդանիների քանդակների ու արձանների: Առանձին մահմեդական երկրներում մեծ տարածում ունեն երկրի նախագահի արձաններն ու նկարները:

Ուշագրավ է, որ վաղ իսլամը հանդես է եկել նաեւ հակաերաժշտական դիրքերից՝ առաջ քաշելով երաժշտության արատավորության թեզը: Այս մասին իսլամի տարբեր ուղղություններ հակոտնյա կեցվածք ունեին: Սուֆիական եւ դերվիշական միաբանությունները, մեծ տեղ տալով երաժշտությանը, օգտագործում էին այն կրոնական արարողություններում: Միջնադարում իսլամական իրավական դպրոցներից հանբալիզնը հանդես էր գալիս երաժշտության լրիվ արտաքսման կոչերով: Այդ միտումը, սակայն, լայն տարածում չգտավ, քանի որ դրան հակադրվեց պատարագի երաժշտության նկատմամբ մարգարեի դրական վերաբերմունք ունենալու վարկածը: Իսլամական ժամերգության մեջ բացակայում է երաժշտական գործիքներով կատարվող երաժշտությունը եւ կարեւոր տեղ է զբաղեցնում հոգեւոր երգեցողությունը (*ալ-ազան*):

Իսլամական փիլիսոփայության տեսանկյունից՝ արվեստի հիմքում գեղեցկության (*ալ-ջամալ*) գաղափարն է: Մարդու մղումը դեպի գեղեցիկը ոչ թե նյութական է, այլ՝ հոգեւոր, որին անվերջ ձգտումն է մարդուն հասցնում կատարելության:



## ԱՄԵՐԻԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀ

### Սամուել Չանտինգտոն

(Չատված հեղինակի վերջերս լույս տեսած  
«Ո՞վ ենք մենք» աշխատությունից)

Ինչ ձեռով ամերիկացիները բնորոշում են իրենց՝ դրանով էլ որոշվում է աշխարհում Ամերիկայի դերի մասին նրանց պատկերացումը. աշխարհի կողմից այդ դերի ընկալումը նույնպես ձեւավորում է ամերիկյան ինքնությունը: Նոր հազարամյակում եւ նոր պայմաններում Ամերիկան ունի համաաշխարհային ասպարեզում իրեն դրսևորելու երեք հնարավորություն. 1. ամերիկացիները կարող են «բացվել աշխարհի առջև», այսինքն՝ բացել իրենց երկիրը այլ ժողովուրդների ու մշակույթների համար, 2. կարող են փորձել այդ ժողովուրդներին եւ մշակույթները վերածել «ամերիկյան արժեքներին» համապատասխան, 3. վերջապես, նրանք կարող են պահպանել սեփական ինքնությունը եւ հակադրել իրենց մշակույթը մյուսներին:

*Աշխարհաքաղաքագիական իդեալ.* դա «թափանցիկ» սահմաններով, էթնիկական, ռասայական եւ մշակութային ինքնությունը, երկքաղաքացիությունը եւ սփյուռքերը խրախուսող, իրենց առավելապես զլորբալ, համաաշխարհային հաստատությունների, նորմաների եւ կանոնների հետ նույնացնող ընտրախավերի կողմից ղեկավարվող *բաց հասարակություն է:* Այդպիսի Ամերիկան կլինի բազմազգ, բազմառասա եւ բազմամշակույթ: Բազմազանությունը կդառնա առաջնային: Որքան շատ մարդիկ իրենց լեզուն, կրոնը եւ մշակույթը բերեն Ամերիկա, այնքան ավելի «ամերիկյան» կդառնա Ամերիկան: Միջին խավի ներկայացուցիչներն ավելի հաճույքով կկողմնորոշվեն դեպի տրանսնացիոնալ կորպորացիաները, որոնց համար աշխատում են, քան դեպի այն ընկերակցությունները, որոնցում ապրում են, եւ այն մարդիկ, որոնց «տեխնոլոգիական արհեստավարժության» պակասը գործի բերումով կապում է այդ ընկերակցություններին: Չասարակության կյանքն ավելի մեծ չափով կծեւավորվի ոչ այնքան դաշնային եւ տեղական օրենքներով, որքան միջազգային հաստատությունների կողմից սահմանված կանոններով, ինչպես նաեւ սովորական միջազգային իրավունքով եւ ամեն տեսակ միջազգային պայմանագրերով: Ազգային ինքնությունն այլ ինքնությունների համեմատ կկորցնի իր նշանակությունը:

Աշխարհաքաղաքացիական այլընտրանքը բացում է Ամերիկյան աշխարհի առաջ, եւ աշխարհը վերաստեղծում է Ամերիկյան:

*Կայսերական այլընտրանքի* դեպքում արդեն Ամերիկյան է վերաստեղծում աշխարհը: «Սառը պատերազմն» ավարտվեց կոմունիզմի՝ որպէս միջազգային ասպարեզում Ամերիկայի դերը սահմանող գլոբալ գործոնի ջախջախմամբ: Դրանով ազատականները հնարավորություն ստացան վարել արտաքին քաղաքականությունը՝ չերկյուղելով այն մեղադրանքներից, թէ այդ քաղաքականությունը խարխուլում է ազգային անվտանգությունը. նոր քաղաքականության նպատակները դարձան ամերիկյան ազգի ամրապնդումը, հումանիտար ներխուժումները եւ «արտաքին քաղաքական գործունեությունը՝ որպէս սոցիալական խնդիր»: Միացյալ Նահանգների կողմից աշխարհի միակ գերտերության կարգավիճակի ձեռքբերումը բարերար ներգործություն ունեցավ նաեւ ամերիկյան պահպանողականների վրա: Սառը պատերազմի ընթացքում Ամերիկայի թշնամիները հանդիմանում էին նրան ինպերիալիստական պահվածքի համար: Նոր հազարամյակի սկզբին ամերիկյան պահպանողականներն ընդունեցին Ամերիկայի կայսրություն լինելու գաղափարը եւ համաձայնեցին այն բանի հետ, որ *ԱՄՆ առաքելությունն է՝ վերակառուցել աշխարհը ամերիկյան արժեքների համապատասխան:*

«Կայսերական ազդակը» խթանվում է Ամերիկայի գերազանցության եւ ամերիկյան արժեքների ունիվերսալության մեջ համոզվածությամբ: Հաստատվում է, որ ամերիկյան հզորությունը անհամեմատ շատ է գերազանցում ցանկացած այլ ազգի ու նույնիսկ ազգերի խմբերի հզորությանը, ուստի Ամերիկյան ունի լիակատար իրավունք՝ հաստատելու սեփական աշխարհակարգը եւ հալածել չարիքը հողագնդի ցանկացած կետում: Համաձայն ունիվերսալիստների՝ մյուս հասարակություններն էլ նվիրված են նույն արժեքներին, ինչին որ ամերիկացիները, իսկ եթէ ոչ, ապա ցանկանում են լինել դրանց նվիրված, իսկ եթէ չեն ցանկանում, ուրեմն համառում են մոլորության մեջ: Ամերիկացիները բացարձակ իրավունք ունեն վերահամոզել եւ նույնիսկ ստիպել նրանց ընդունելու այն ունիվերսալ արժեքները, որոնք որոշում են ամերիկյան կենսակերպը: Այդպիսի աշխարհում Ամերիկյան կորցնում է իր ազգային ինքնությունը եւ դառնում համաշխարհային կայսրության մայր երկիր (մետրոպոլիս):

Սակայն վերոհիշյալ տեսակետները չեն համապատասխանում նոր հազարամյակի իրողություններին: Այո՛, Ամերիկյան միակ գերտերությունն է, բայց աշխարհի քարտեզի վրա կան նաեւ այլ խոշոր «խաղացողներ». գլոբալ նակարդակում դրանք Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Չինաստանը, Հնդկաստանն ու ճապոնիան են, իսկ տարածա-

շրջանային մակարդակում՝ Բրազիլիան, Եգիպտոսը, Իրանը, Յարավային Աֆրիկան եւ Ինդոնեզիան: Ամերիկան չի կարող հասնել որոշակի լուրջ նպատակների առանց գոնե մի քանի համաշխարհային «խաղացողների» աջակցության: Այլ հասարակությունների մշակույթը, արժեքները, ավանդույթներն ու հաստատությունները հաճախ անհամատեղելի են ամերիկյան արժեքների հետ եւ, այդ երկրների ժողովուրդների կարծիքով, ենթակա չեն վերաիմաստավորման: Որպես կանոն, այդ ժողովուրդները խորապես կապված են սեփական մշակույթին, ավանդույթներին, հաստատություններին ու կտրականապես դեմ են իրենց «արտաքին» արժեքներ եւ իդեալներ պարտադրելուն:

Ավելացնենք. ինչպիսին էլ որ լինեն վերնախավի նպատակները, ամերիկյան հասարակությունը ժողովրդավարության տարածմանը վերաբերվում է որպես ամերիկյան արտաքին քաղաքականության «ոչ առաջնային» խնդրի: «Ժողովրդավարության պարադոքսին» լրիվ համապատասխան, այլ երկրներում ժողովրդավարական կառավարման հաստատումը հաճախ հանգեցնում է այդ հասարակություններում հակամերիկյան տրամադրությունների ուժեղացմանը եւ իշխանությունը փոխանցում ազգայնական շարժումներին (ինչպես Լատինական Ամերիկայում) կամ արմատական խմբավորումներին (ինչպես մահմեդական երկրներում):

Աշխարհաքաղաքացիական ու կայսերական մոտեցումներն ուղղված են Ամերիկայի եւ մյուս հասարակությունների միջեւ սոցիալական, քաղաքական ու մշակութային տարբերությունների վերացմանը: Ազգային մոտեցումն ընդունում է Ամերիկայի առանձնացումը այլ երկրներից: Ամերիկան չի կարող վերածվել համաշխարհային տերության եւ մնալ ինքն իրենով: Մյուս հասարակությունների ներկայացուցիչները չեն կարող դառնալ ամերիկացի՝ մնալով նախկինը:

Ամերիկան տարբերվում է մյուսներից, այն բացառիկ է, եւ այդ բացառիկությունը զգալի չափով որոշվում է նրա կրոնասիրությամբ ու անզլոբողոքական մշակույթով: *Աշխարհաքաղաքացիության եւ իմպերիալիզմի այլընտրանքն ազգայնականությունն է, որը կոչված է պահպանելու եւ բազմապատկելու Ամերիկայի նվաճումները, այսինքն՝ այն որակներն ու հատկանիշները, որոնք մոտ չորս հարյուրամյակ առանձնացրել են ամերիկացիներին մնացյալ ազգերից:*

Ամերիկայի կրոնասիրությունը զատում է նրան արեւմտյան հասարակությունների խմբից: Բացի դրանից, ամերիկացիները առավելապես քրիստոնյա են եւ դրանով տարբերվում են ոչ արեւմտյան ազգերի մեծ մասից: Ամերիկայի կրոնասիրությունը ստիպում է ամերիկացիներին աշխարհը դիտել որպես բարու եւ չարի պայքարի ասպարեզ: Մյուս հասարա-

կությունների ներկայացուցիչները հաճախ այդ կրոնասիրությունը համարում են ոչ միայն արտասովոր, այլև զայրացնող, քանզի այն անդրադարձնում է կրոնական բարոյականությունը Միացյալ Նահանգների քաղաքական, տնտեսական եւ սոցիալական գործունեության վրա:

Այսօր էլ ազգայնականությունն ամենեւին չի կորցրել իր կապը կրոնի հետ: Առավել կրոնական երկրները, որպես կանոն, առավել ազգայնական են լինում:

Ամերիկյան ազգային ինքնության համար առանցքային տարր է հանդիսանում «այլախոհ» բողոքականությունը: Ամերիկացիները նվիրված են Աստծուն եւ իրենց երկրին, նրանց համար Աստված եւ երկիրը անբաժանելի են: Աշխարհում շատ բան պայմանավորվում է կրոնով, եւ զարմանալի չէ, որ ամերիկացիները ազգային ինքնության եւ ազգային միասնության որոնումներում նորից դիմել են կրոնին:

Ամերիկյան ընտրանու մի մասը բավական բարյացակամությամբ է վերաբերվում Ամերիկայի վերածնանը աշխարհաքաղաքացիական հասարակության, մյուս մասը հանդես է գալիս Ամերիկայի՝ կայսրության կարգավիճակի ձեռքբերման օգտին: Ամերիկյան ժողովրդի ճնշող մեծամասնությունը ազգային-հայրենասիրական այլընտրանքի եւ հարյուրամյակներով գոյություն ունեցող ամերիկյան ինքնության պահպանման ու ամրապնդման կողմնակից է:

Ամերիկյան դառնում է աշխարհ: Աշխարհը դառնում է Ամերիկա: Ամերիկյան մնում է Ամերիկա. աշխարհաքաղաքացիակա՞ն, կայսերակա՞ն, ազգայնակա՞ն: Ամերիկացիներին հարկ է լինելու կատարել ընտրություն, որը կորոշի ե՛ւ ազգի, ե՛ւ ողջ աշխարհի ճակատագիրը:

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՆՈՐ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
Հենրի Քիսինջեր**

Երբ ապագայում պատմաբանները շարադրեն մեր դարաշրջանի պատմությունը, մեր օրերի շշմեցուցիչ խորագրերը՝ Իրաքը եւ նրա հարուցած ճգնաժամը, շատ հեշտությամբ կարող են լինել տողատակի ծանոթագրություններ: Որովհետեւ աշխարհում տեղի են ունենում միանգամայն նոր, առանձնահատուկ տեղաշարժեր. *քաղաքականության ծանրության կենտրոնը տեղափոխվում է խաղաղօվկիանոսյան տարածաշրջան:*

Ներկայում միջազգային ասպարեզի գրեթե բոլոր «խաղացողները» ձգտում են նորովի ձեւակերպել սեփական դերակատարումները: Ընդ որում, խոսքը ինչպես երկարաժամկետ հայեցակարգերի, այնպես էլ ուժերի հաշվեկշռի մասին է:

Տարօրինակ է, սակայն ԱՄՆ-ի ու Եվրոպայի միջեւ կառուցվածքային օտարումը տեղի է ունենում այն պահին, երբ միջազգային քաղաքականության կենտրոնը տեղափոխվում է Ասիա: Վերջին ժամանակներս Միացյալ Նահանգների հարաբերություններն այդ տարածաշրջանի կարեւորագույն երկրների հետ քիչ կոնֆլիկտային էին: Ռուսաստանը, Չինաստանը, ճապոնիան ու Հնդկաստանը, օրինակ, շահագրգռված են, որ ԱՄՆ-ը խուսափի Իրաքում պարտությունից, որովհետեւ՝ ա) Հնդկաստանի բնակչության մի մեծ մասը մահմեդական է, բ) Ռուսաստանը երկյուղում է մինչեւ Միջին Ասիա տարածվող սեփական հարավային սահմաններում քաղաքական անկարգություններից, գ) ճապոնիան արդեն վաղուց հենվում է Ամերիկայի ուժին եւ փոփոխությունների դարաշրջանում այդ միության կարիքն ունի, դ) Չինաստանը հույս ունի, որ ԱՄՆ-ի հետ գործընկերությունը կայունության կարեւորագույն նախադրյալ կհանդիսանա:

Այժմ այս բոլոր պետություններն աշխատում են նոր քաղաքական ձեւակերպումների վրա:

Ռուսաստանը, որ կրճատվել է մինչեւ Պետրոս Մեծի դարաշրջանի սահմանները, ապրում է ապագադուրացման ժամանակաշրջան, որի արդյունքում, որպես բացառիկ հիվանդագին գործընթաց, նրա սահմաններին ձեւավորվում են նոր պետություններ: Այս երկրին սպասվում են ծանր փորձություններ. տերության արեւմուտքում եւ հարավում նախկին խորհրդային հանրապետությունների հետ հարաբերությունների նորովի

կանոնակարգում, այնուհետև՝ հարաճուն զարգացող Չինաստանի հետ հարեւանություն եւ զգալիորեն քիչ բնակեցված Սիբիր, Միջին Ասիայի էներգիայի աղբյուրների ապագայի անորոշություն, որոնց համար ներկայում սկսվում է խաղը Ռուսաստանի, Չինաստանի, Չնդկաստանի եւ ԱՄՆ միջեւ:

Արդեն այսօր Չինաստանի անցումը խոշոր տերությունների շարքը՝ գերտերություն դառնալու հեռանկարով, հանդիսանում է միջազգային քաղաքականության ծանրության կենտրոնի Ասիա տեղափոխման առանցքային տարրը: Այն չափով, որ Չինաստանը սկսում է հրաժարվել հեղափոխական տեսությունից, նույնքանով նրա մոտ կարող է առաջանալ այն ազգայնականությամբ փոխարինելու գայթակղություն: Դա կարող է Թայվանի չլուծված խնդիրն լրացուցիչ խորհրդանշական իմաստ տալ:

Շարունակվում է հյուսիսկորեական ատոմային ծրագրի շուրջ բանավեճը, ինչը ակնառու օրինակն է նրա, թե որքան Արեւմուտքի համար կարելու է Չինաստանի հետ կայուն համագործակցությունը: Հյուսիսկորեական միջուկային ծրագիրը, որ Միացյալ Նահանգների կողմից դիտվում էր իբրեւ, այսպես կոչված, «չարիքի առանցքի» պետությունների սպառնալուծությունների վրա հսկողություն իրականացնելու խնդիրներից մեկը, սրել է առճակատումը Հյուս. Կորեայի եւ ԱՄՆ միջեւ:

Ըստ երեւոյթին, այսօր ամենաընդգրկուն փոփոխությունները կատարվում են ճապոնիայում: Երկրորդ աշխարհամարտում պարտվելուց հետո, գտնվելով ԱՄՆ հետ երկկողմ համաձայնագրի պաշտպանության ներքո՝ ճապոնիան իրեն հատուկ ինքնակարգապահությամբ կենտրոնացավ երկրի տնտեսական վերականգնման ու միջազգային ընկերակցության կողմից պետության քաղաքական ճանաչման վրա: Այդ ժամանակահատվածում, առաջին անգամ իր հազարամյա պատմության ընթացքում, այս երկիրն իր արտաքին քաղաքականությունը ենթարկեց այլ պետության: Միջազգային իրադրության փոփոխման ընթացքում ճապոնիան, զգուշորեն եւ աննկատ կերպով, հետեւողականորեն ընդարձակեց իր գործողությունների շառավիղը: Ահաբեկչության դեմ պայքարի նշանաբանի ներքո՝ այսօր ճապոնիան պատրաստ է իր վրա վերցնել Ամերիկայի օգնականի դերը եւ միաժամանակ պայմաններ ստեղծել՝ որպես առաջատար տերություն միջազգային ասպարեզ մուտք գործելու. հնարավորություն ու, միաժամանակ, մարտահրավեր ԱՄՆ-ի համար:

Հյուս. Կորեայի կողմից սադրանքն արագացրեց այս գործընթացը, որովհետեւ ճապոնիան ավանդաբար համարում է, որ այդ պետությունը

շոշափում է իր անվտանգության շահերը, եւ ինքը լռությամբ ու անպատասխան կերպով չի հետեւի հարեւան երկրում ատոմային զենքի տեղակայմանը:

Եթե Պեկինում «վեցյակի» բանակցությունների արդյունքները հանրագումարում թույլ տան Յու. Կորեային ունենալ սահմանափակ միջուկային ներուժ, ապա ճապոնիան օրակարգ կմտցնի սեփական միջուկային զենքի ստեղծումը կամ, ծայրահեղ դեպքում, կջանա ստանալ հնարավորություն՝ կարճ ժամկետում մարտագլխիկների արտադրություն կազմակերպելու:

Ճապոնիայի արագացված զարգացումը պայմանավորված է նաեւ Չինաստանի աճով: Այս հանգամանքը կարող է ստիպել նրան դիմելու գործողությունների առնվազն երեք տարբերակի. 1. շարունակել արտաքին քաղաքականությունը՝ հիմնված ԱՄՆ հետ դաշինքի վրա, 2. ձգտել ստեղծելու Եվրամիության տիպի ասիական պետությունների կազմակերպություն, 3. Չինաստանի հետ որեւէ ձեւի գործընկերության հիման վրա՝ ամրապնդվել չեզոքության դիրքերում՝ սեփական նպատակները լավագույնս իրագործելու համար:

Յնդկաստանի վերածումը գերտերության՝ գալիք տասնամյակի կարելորագույն իրադարձություններից մեկն է: Դա երեւում է թեկուզեւ նրանից, որ Յնդկաստանի անվտանգության շահերի համար ամենակարեւոր տարածաշրջանները՝ մահմեդական աշխարհը եւ Կենտրոնական Ասիան, նույնական են ամերիկյան արտաքին քաղաքականության կիզակետի հետ, իսկ այդ տարածաշրջանում երկու պետությունների հետաքրքրությունները մեծապես համընկնում են: Բրիտանական կայսրության փլուզումից հետո Յնդկաստանը հաջողությամբ դիմակայեց Սինգապուրից մինչեւ Ադենի նեղուց ընկած գոտում օտար գերտերության հայտնվելուն: 150 մլն մահմեդական բնակչությամբ (որը մեկ սերնդի ընթացքում կարող է աճել մինչեւ 300 մլն) Յնդկաստանը, առավել քան որեւէ այլ երկիր, շահագրգռված է, որ ահաբեկչության դեմ պայքարի վերջում հաջողվի տեղայնացնել արմատական իսլամիզմը, քանզի այդ շարժումը կանգ չի առնի Յնդկաստանի սահմանների մոտ:

\* \* \*

Այս բոլորը ցույց են տալիս, որ ողջ աշխարհն այսօր գտնվում է այնպիսի շարժման մեջ, ինչպիսին արդեն հարյուրամյակներ չի դիտվել: Այսօր, ինչպես երկրորդ աշխարհամարտից հետո, ամերիկյան դիվանագիտության առջեւ վերստին ծառանում են նոր աշխարհակարգի տարրերի մշակման խնդիրները: Այն ժամանակ այդ հարցը հաջողությամբ

լուծվեց: Բայց այժմ պայմաններն ավելի բարդ են, քանզի հարկ է լինելու կազմակերպել ոչ թե ատլանտյան, այլ գլոբալ տարածությունը:

ԱՄՆ հզորությունն անվիճելի փաստ է, սակայն դիվանագիտության բարձր արվեստը հզորությունը համաձայնության լեզվի փոխադրելու մեջ է: Դա ենթադրում է ոչ միայն լավ հարաբերություններ բոլոր պետությունների հետ՝ մաներելու հնարավորինս մեծ տարածություն ունենալու համար, այլև առավել կարելու է բոլորին միավորող գաղափարի ձեւակերպումը՝ հատկապես այնտեղ, որտեղ խնդիրներն ակնհայտ կերպով համախմբում են բոլոր պետություններին:

Մերձավոր Արեւելքի ողբերգական պատմության գագաթնակետին, չնայած հիասթափությանը, *ամերիկյան քաղաքականությունն իր ուշադրությունը պետք է սեւեռի աշխարհի այն պատկերին, որն սպասում է իր առարկայացմանը:*

**Die Welt**



## **Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

<b>ՀԱՅՈՑ ՍՓՅՈՒՌՔԸ</b> .....	<b>1</b>
<b>Ռուբեն Խուրշուդյան</b>	
<b>ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ</b> .....	<b>3</b>
<b>Կարեն Վերանյան</b>	
<b>ՎՐԱՑ-ՀԱՐԱՎՕՍԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ</b> .....	<b>7</b>
<b>Սեւակ Սարուխանյան</b>	
<b>ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԻՐԱՆԻ ՇՈՒՐՋ</b> .....	<b>13</b>
<b>Գագիկ Տեր-Հարությունյան</b>	
<b>ԻՐԱՔՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԲԱԶՄԱԲԵՎԵՌ</b> <b>ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ</b> .....	<b>18</b>
<b>Սարգիս Հարությունյան</b>	
<b>ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ</b> <b>ԱՄՆ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ</b> .....	<b>25</b>
<b>Արաքս Փաշայան</b>	
<b>ԱՐՎԵՍՏԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ</b> .....	<b>29</b>
<b>Սամուել Հանտինգտոն</b>	
<b>ԱՄԵՐԻԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԸ</b> .....	<b>33</b>
<b>Հենրի Քիսինգթեր</b>	
<b>ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ</b> <b>ՆՈՐ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ</b> .....	<b>37</b>

*Շապիկի վրա պատկերված է  
Կաքավաբերդը (Ազատ գետի վերին հոսանքում)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ ՕՄՍ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: